

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՋՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Է. Բ. ԱՂԱՅԱՆ

Հայոց լեզվի հնչյունական համակարգի պատմության կարևոր երևույթներից մեկը չ և ղ հնչյունների պատմական զարգացումն է, և դրա հետևանքով՝ այդ երկուսից մեկի վերածումը մի բոլորովին այլ, ոչ թե ձայնորդ, այլ ետնալեզվային ձայնեղ շփականի՝ ժամանակակից արտասանությամբ: Այդ պատճառով էլ պատահական չէ, որ հայագիտության մեջ այդ հնչյունների պատմությամբ շատ են զբաղվել: Բազմաթիվ դիտողությունների, արտահայտված տեսակետների ու ենթադրությունների մեջ գիտական տեսակետից առավել հիմնավորված և հին հայերենի ձայնորդ ղ (յ)-ի անցումը շփական ձայնեղ ղ (չ)-ի պատմականորեն լուսաբանող ուսումնասիրությունը պատկանում է Հ. Աճառյանին, որը բազմաթիվ փաստերի քննությամբ այն եզրակացության է հանգում, որ X—XI դարերում գրաբարյան ղ-ն արդեն ստացել էր այժմյան հնչյունական որակը: Գնահատելով մեծ հայագետի ուսումնասիրությունը որպես իր քննարկած հարցի սպառիչ լուսաբանություն՝ մենք նպատակ ունենք սույն հոդվածում ուրվագծել հայերեն լ-ի և ղ-ի պատմությունը հնչյութաբանական մոտեցումով՝ սկսած նախնական շրջանից մինչև մեր օրերը: Այս կարգի ուսումնասիրության համար առաջին հերթին անհրաժեշտ է. ա) ընդունել պատմական որևէ շրջանն իբրև ելակետային վիճակ, պարզել այդ վիճակի բնորոշ գծերը և վերհանել հետագայում տեղի ունեցած փոփոխությունները: Բ) Դիտելով այդ շրջանն իբրև հարաբերականորեն կայուն վիճակ՝ որոշել լ և ղ-ի հնչույթային բնույթը, այսինքն՝ պարզել, թե այդ շրջանի լեզվում նրանք հանդես են գալիս հնչույթային հակադրության մեջ, թե ենթահնչույթային (вариантный, аллофонный) կամ տարբերակային (варнационный) հարաբերությամբ:

Առաջին խնդիրը համեմատաբար հեշտությամբ է լուծվում. ելակետային վիճակը պետք է ներկայացնի պատմականորեն մեզ հայտնի ամենախնայական շրջանը: Այդպիսին կարելի է համարել հնդեվրոպական նախալեզուն, բայց սովյալ դեպքում դա իբրև ելակետային վիճակ չենք կարող ընդունել այն պարզ պատճառով, որ այդ վիճակից մինչև հայերենի գրավոր աղբյուրներից մեզ հայտնի համակարգի շրջանը բաժանում է մոտ երեք հազար տարվա ժամանակաշրջան, որի ընթացքում տեղի ունեցած ամբողջ պատմական պրոցեսը մեզ հայտնի չէ. մենք գիտենք ելակետային (հնդեվրոպական) և հետևանքային (գրաբարյան) վիճակները առանց նրանց միջև ընկած անցման օղակների: Մնում է, ուրեմն, իբրև ելակետային վիճակ ընդունել հայերենի՝ մեզ հայտնի ամենահին համակարգը, որ է հինգերորդ դարի առաջին կեսի մատենագրության լեզուն՝ դասական գրաբարը: Պարզելով լ և ղ-ի հարաբերությունը լեզվական այդ վիճակի մեջ՝ մենք կարող ենք արդեն հետևել նրանց պատմական

զարգացմանը հետագա դարերում, ինչպես և՛ որոշ տվյալներ ստանալ ֆա-
խորդող շրջանների վիճակի մասին: Այստեղից ինքնին բխում է այն, որ դա-
սական գրաբարի տվյալներն ուսումնասիրելու ենք առաջին հերթին սինխրո-
նիկ մոտեցմամբ, դրան համապատասխան էլ դիտելով այդ շրջանի լեզուն որ-
պես կայուն համակարգ: Հասկանալի է, որ լեզվի պատմության ամենափոքրիկ
էտապն էլ, անգամ, չի կարող ներկայացնել իսկապես խիստ կայուն վիճակ:
Բայց ամեն մի առանձին փուլ, այնուամենայնիվ, ինքն իր մեջ ներկայացնում
է հարաբերական կայունություն (առանց որի անկարելի է պատկերացնել հա-
սարակական հաղորդակցումը), որ և հնարավոր է դարձնում լեզվական երե-
վույթների ուսումնասիրությունը սինխրոնիկ մոտեցումով. բացի դրանից, մեկ
առանձին երևույթի համար 50—60 տարին շատ փոքր ժամանակաշրջան է, և
պատմական պրոցեսի դեմ մեղանշած չենք լինի այդպիսի մի կարճ շրջանի
մեջ այս կամ այն երևույթը որպես կայուն վիճակ դիտելով:

Երկրորդ խնդրի՝ դասական գրաբարում չ և ղ-ի հնչույթային հարաբերու-
թյան որոշման համար մեզ անհրաժեշտ է կիրառել ժամանակակից հնչույթա-
բանական (ֆոնոլոգիական կամ ֆոնեմատիկ) վերլուծությունների մեթոդը:
Այդ մեթոդը կիրառելու համար էլ, սակայն, պետք է ծանոթանալ այն սկրի-
բուներին, որոնց վրա հենվում է ժամանակակից հնչույթաբանությունը:
Հնարավորություն չունենալով այս փոքրիկ հոդվածում մանրամասնորեն քնն-
նության առնել հնչույթաբանական զանազան ուղղությունները, մենք կանգ
կառնենք միայն մեկ, այժմ առավել տարածված տեսության վրա: Ինչպես ար-
տասահմանյան, հատկապես ամերիկյան լեզվաբանների գերակշռող մասը,
այնպես էլ սովետական լեզվաբաններից ոմանք հնչույթը բնորոշում են ֆունկ-
ցիոնալ մոտեցումով. հնչույթը, այդ տեսության համաձայն, այն նվազագույն
միավորն է, որ ծառայում է լեզվական իմաստների տարբերակմանը: Սրան
համապատասխան էլ այս ուղղության ներկայացուցիչները հնչույթին վերա-
գրում են իմաստազատիչ (смыслоразличительный) կամ նշանակողական
(сигнификативный) գեր: Այս սահմանումից բխում է այն, որ այն ամենը,
ինչ որ լեզվի մեջ իմաստազատիչ գեր չի կատարում, հնչույթ չէ, և, ընդհա-
կառակն, այն ամենը, ինչ-որ լեզվի մեջ այդպիսի գեր կատարում է, հնչույթ է:
Որ իմաստազատիչ գեր չունեցող միավորները հնչույթ չեն, դա ճիշտ է և այդ
եզրակացությանը կհանդեպ, ինչպես էլ սահմանելու լինենք հնչույթը: Ինչ
վերաբերում է այն հետևությանը, որ ամեն ինչ, որ իմաստազատիչ գեր է կա-
տարում, հնչույթ է, ապա սա սխալ է և տանում է դեպի հնչույթի նյութակա-
նության բացասումը: Մենք, իբրև ելակետ, ընդունում ենք հնչույթի հենց նյու-
թականությունը: Եզակիորեն դրսևորվող բազմաթիվ հնչունները խմբավորվում
են որոշակի էական հատկանիշներով: Հաղորդակցման պրոցեսում, բազմատե-
սակ կապակցությունների, դիրքերի ու արտասանությունը պայմանավորող զա-
նազան հանգամանքների մեջ, ունենք, օրինակ, եզակիորեն դրսևորվող բազ-
մաթիվ և հնչուններ, որոնցից յուրաքանչյուրը տարբերվում է մյուսներից
այս կամ այն մասնավոր, միայն իրեն հատուկ հատկանիշով. բայց դրա հետ
միասին բոլոր այդ եզակի դրսևորումները պատվում են մեկ առանցքի շուրջը,
համախմբվում են մեկ միավորի տակ՝ իրենց ընդհանուր, բոլորին հատուկ էա-
կան հատկանիշներով: Այդ ընդհանուրը, տվյալ օրինակի համար, և հնչույթն
է: Հնչույթն այսպիսով նյութականորեն գոյություն ունեցող միավոր է, որ
բնորոշվում է որոշակի էական, կամ ինչպես լեզվաբանության մեջ ընդունված

է ասել, տարբերակիչ հատկանիշներով: Ամեն մի կոնկրետ հնչյունը գրականորումն է որևէ հնչույթի և իրրև աղապիսին նա իր մեջ կրում է տվյալ հնչույթի էական հատկանիշները: Այս տեսակետից հնչույթը և հնչյունը նույնպիսի հարաբերության մեջ են, ինչպիսի հարաբերության մեջ գտնվում են, օրինակ, տեղեր (ընդհանրապես, իրրև ընդհանուր) և առանձին, կոնկրետ, անվերջորեն բազմաթիվ ու բազմազան եզակի տերևները: Իրականում չկա տերև ընդհանրապես, կան բազմաթիվ եզակի տերևներ. բայց հենց այդ բազմաթիվ եզակի տերևներն էլ ոչ այլ ինչ են, եթե ոչ տերևի (ընդհանուրի) իրական գրականորումները, և քանի որ նրանք բոլորն էլ իրենց մեջ կրում են ընդհանուրի, ընդհանրապես տերևի էական հատկանիշները, ապա տերևն ընդհանրապես իրական է: Հնչույթի և հնչյունի հարաբերությունը նյութականորեն գոյություն ունեցող ընդհանուրի և նրա եզակի գրականորումների հարաբերություն է. «...Առանձինը այլ կերպ գոյություն չունի,—ասում է Վ. Ի. Լենինը,—քան այն կապակցությամբ, որը տա-նում է դեպի ընդհանուրը: Ընդհանուրը գոյություն ունի միայն առանձինում, առանձինի միջոցով: Ամեն մի առանձինը (այսպես թե այնպես) ընդհանուր է: Ամեն մի ընդհանուր առանձինի (մասնիկը կամ կողմը կամ էություն) է: Ամեն մի ընդհանուր միայն մոտավորապես է ընդգրկում բոլոր առանձին առարկաները: Ամեն մի առանձին ընդհանուրի մեջ մտնում է ոչ լիովին և այլն, և այլն»¹: Այսպիսով՝ հնչույթը միևնույն էական (տարբերակիչ) հատկանիշներն ունեցող հնչյունների ընդհանուրն է և իրրև աղապիսին՝ լեզվի նյութական միավորը: Մենք կանգ չենք առնում հնչույթի բնորոշման հետ կապված մի շարք մասնակի հարցերի վրա, որին անդրադառնում ենք մեր մի այլ տպագրության պատ-րաստվող մենագրության մեջ: Այստեղ կարևոր ենք համարում շեշտել միայն, որ հնչույթի այսպես կոչված իմաստազատիչ դերը պայմանավորված է հենց նրա նյութական բնույթով: Այսպես, տվյալ լեզվի ամեն մի հնչույթ ունի իրեն հատուկ էական հատկանիշները. այդ հատկանիշներով կամ գոնե դրանցից մեկով նա տարբերվում է մյուս բոլոր հնչույթներից, հակադրվում նրանց: Օրի-նակ, ժամանակակից հայերենի ա, ի, կ, ք, և այլ հնչույթներից յուրաքան-չյուրն ունի իր էական հատկանիշները. կ հնչույթի էական հատկանիշներն են, օրինակ, բաղաձայնությունը, խլությունը, պայթականությունը, ետնալեզվայ-նությունը և այլն². Եթե համեմատենք կ-ն ի հնչույթի հետ, կտեսնենք, որ նրան հակադրվում է իր բոլոր հատկանիշներով, իսկ եթե համեմատենք ք-ի հետ, կգտնենք միայն մի էական հատկանիշ՝ հակադրություն, այն է՝ շնչեղություն— ոչ շնչեղություն: Նշանակում է, ամեն մի հնչույթ առնվազն մեկ էական (տար-բերակիչ) հատկանիշով պետք է հակադրվի տվյալ լեզվի բոլոր մյուս հնչույթ-ներին ու տարբերվի նրանցից: Արդ, քանի որ հնչույթները ծառայում են իմաստների նյութական ձևավորմանն ու հաղորդմանը, ապա բնական է, որ հենց ձևերի տարբերակումով պետք է առաջ բերեն նաև իմաստների տարբե-րակում. եթե մի դեպքում ոմենք տեւ, իսկ մյուս դեպքում՝ դեւ կապակցու-թյունը, որ հանդես է գալիս իրրև լեզվական իմաստի նյութական ձև, ապա պարզ է, որ այդ ձևերի և դրանց շնորհիվ՝ իմաստների տարբերակումը պայ-մանավորված է միայն տ—ո հակադրությամբ, որովհետև երկու ձևերը իրենց մյուս բաղադրիչներով նույնական են: Իսկ սրանից բխում է այն, որ հնչույթ-

¹ Վ. Ի. Լենին, Մարքս—Էնգելս մարքսիզմ, Երևան, 1930, էջ 383:

² Մատչելիության համար մենք այստեղ գործածում ենք ավանդական տերմինները:

ների իմաստազատիչ դերը պայմանավորված է նրանց նյութականությամբ. եթե տ-ն և ո-ն իրրե նյութական միավորներ չհակադրվեին իրար ուրեք տարբերակիչ հատկանիշով, ապա՝ տևր և դեր ձևերն էլ չէին տարբերվի, նրանց իմաստներն էլ¹:

Ելնելով հնչույթի այս սահմանումից՝ մենք տվյալ լեզվի հնչույթների ուսումնասիրության երկու միջոցի կարող ենք դիմել. ա) հնչյունների փորձառական հետազոտություն, որի տվյալների վրա հենվելով մենք կարող ենք որոշել ուսումնասիրվող լեզվի հնչյունական համակարգի տարբերակիչ հատկանիշների սիստեմը, իսկ դրա օգնությամբ՝ տվյալ լեզվի հնչույթները. բ) հնչույթների իմաստազատիչ դերի հետազոտությամբ. քանի որ հնչույթը իր նյութականությամբ հանդես է գալիս որպես իմաստների ձևավորման միավոր և դրանով իսկ տարբերակում իմաստները, ապա մենք կարող ենք գործնականորեն նաև հակառակ կողմից սկսել ուսումնասիրությունները, այսինքն՝ պարզել, թե որ միավորները (հնչյուններն) են իմաստազատիչ դերով հանդես գալիս տվյալ լեզվի մեջ, և որոնք՝ ոչ: Այն բոլոր հնչյունական միավորները, որոնք հանդես են գալիս իմաստազատիչ դերով, հնչույթներ են, իսկ նրանք, որ այդպիսի դեր չեն կատարում, հնչույթներ չեն, այլ նրանց զանազան տիպի տարբերակները:

Գենդանի լեզուների համար օգտագործելի են երկու եղանակն էլ, իսկ ավելի լավ է դրանց զուգակցումը. մեռած լեզուների համար գործադրելի է միայն երկրորդ եղանակը, որին դիմում ենք և մենք: Բայց քանի որ այդ եղանակն ենք կիրառելու, ապա մեզ անհրաժեշտ է ծանոթանալ հնչույթաբանական վերլուծությունների համար գործնականորեն կարևոր երկու կարգի հասկացությունների՝ բաշխման ու լրացուցիչ բաշխման և հնչույթի ուժեղ և թույլ դիրքերի հասկացություններին:

Ամեն մի լեզվի մեջ հնչույթներն իրենց գործածության որոշ սահմանափակումներ կարող են ունենալ, որոնք պայմանավորված են զանազան պատճառներով: Այդ սահմանափակումները բնորոշում են ոչ միայն տվյալ հնչույթի գործածության շրջանակները, այլև՝ հաճախ այդ հնչույթի և ուրիշ հնչույթների կամ էլ այդ հնչույթի և նրա եզակի դրսևորումների (հնչյունների) փոխհարաբերությունը: Այսպես, լինում են դեպքեր, երբ երկու հնչույթային միավորներ հանդես են գալիս տարբեր դիրքերում՝ փոխարինելով միմյանց. օրինակ, հին հայերենում ՚ ձայնավորը գործածվում է մերթ որպես ձայնավոր՝ երկրարբառի բաղադրիչ, մերթ իրրե բաղաձայն, այլ կերպ ասած, մեր գրաբարյան ՚ տառը ներկայացնում է երկու հնչույթային միավորներ (i և y), որոնցից յուրաքանչյուրն ունի իր գործունեության որոշակի սահմանները: Այսպիսի հարաբերությունը երկու կամ ավելի հնչույթային միավորների միջև՝ կոչում են լրացուցիչ բաշխման հարաբերություն: Լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվող հնչույթային միավորները մեկ հնչույթի ենթահնչույթներն են (варианты, аллофоны): Հնարավոր է, որ տվյալ հնչույթը գործածության սահմանափակում չունենա, բայց որոշ դիրքերում, որոշ կապակցություններում արտասանական ինչ-որ առանձնահատկություններ ունենա կանոնավոր կերպով, ստանա ուրեք լրացուցիչ հատկանիշ. օրինակ, ռուսերենում Կ-ն գործած-

¹ Մենք այստեղ կանգ չենք առնում համանունների վրա, որոնց իմաստային տարբերակումը պայմանավորված է խոսքային հանդամանքներով:

վում է բոլոր դիրքերում, բայց ԿԴ կապակցության մեջ նա արտասանվում է ԿԻ (շնչեղանում է)։ քանի որ շնչեղացումը ռուսերենի հնչույթային համակարգի էական հատկանիշների կազմի մեջ չի մտնում, ապա պարզ է, որ տվյալ կապակցության մեջ կանոնավորապես և օրինաչափորեն հանդես եկող ԿԻ-ն առանձին հնչույթ չէ, այլ Կ հնչույթի մի տարրերակը (կոմբինատոր տարրերակը)։ Հնչույթների, ենթահնչույթների ու տարրերակների հարաբերությունները ավելի պարզ ու ավելի ճշգրտորեն որոշելու համար մենք բաշխման ու լրացուցիչ բաշխման հասկացությունները փոխարինում ենք ՈԼՐՄԻ ու նրա զանազան սահմանափակումները որոշող հասկացություններով¹։

1. ՈԼՐՄ (սֆերա), բոլոր կարգի հնարավոր կապակցություններն ու բոլոր հնարավոր պայմանները, որոնց մեջ կարող են գործածվել տվյալ լեզվի տվյալ կարգի (ձայնավոր, բաղաձայն) հնչույթները։ Ըստ որում, անհրաժեշտ է նշել, որ ոչ մի հնչույթ և ոչ մի լեզվում չի կարող ընդգրկել ոլորտն իր ամբողջ, բացարձակ ծավալով։ Այսպես, օրինակ, ենթադրենք, թե ա հնչույթը ժամանակակից հայերենում գործում է ամբողջ ոլորտի ընդգրկումով։ Այս ենթադրությունը սխալ դուրս կգա, եթե մենք դրանով հասկանանք ոլորտն իր բացարձակ ծավալով։ չէ՝ որ ա հնչույթը կարող է հանդես գալ միայն ձայնավորներին հատուկ կապակցություններում և այն էլ ժամանակակից հայերենի համար հնարավոր կապակցություններում։ նա չի կարող, օրինակ, հանդես գալ որևէ ուրիշ ձայնավորի հետ մեկ վանկի մեջ, մինչդեռ գրաբարում կարող էր այդպիսի կապակցությունների մեջ լինել, որպես երկրարբառի վանկարար ձայնավոր (նա, ուա և այլն)։ Հետևաբար, խոսելով ոլորտի ամբողջ ծավալն ընդգրկելու մասին այս կամ այն հնչույթի գործածության սահմանները որոշելու ժամանակ, մենք միշտ պետք է նկատի ունենանք տվյալ կարգի հնչույթներին տվյալ լեզվում հատուկ ընդհանուր սահմանափակումներով ամբողջական ոլորտը։ Պայմանականորեն նշանակենք ոլորտը հունարեն տերմինի սկզբնատառով՝ Տ։

2. ԳԵՐՈԼՐՄ² (մեգոսֆերա)։ ամբողջական ոլորտը՝ տվյալ հնչույթի համար այս կամ այն առանձնակի սահմանափակումով։ օրինակ, գրաբարում ո ձայնավորը չի կարող լինել բառավերջում (բացառություն են կազմում պատճառակա՞ր բայերի եզակի հրամայականը՝ մատո՛ւ, նաո՛ւ, և բո ղերանունը, որոնք ավելի վաղ շրջանում նույնպես ունեցել են վերջահանգ յ)։ նշանակում է, ո հնչույթը գրաբարում ընդգրկում էր ամբողջ ոլորտը՝ հանած վերջահանգ դիրքը, այլ կերպ ասած, նա ընդգրկում էր ոլորտի ամբողջական ծավալի բացարձակորեն գերակշռող մասը՝ մասնակի սահմանափակումով, և այդ պատճառով էլ այդպիսի ընդգրկման ոլորտը կոչում էնք գերոլորտ։ Եթե գերոլորտը պայմանականորեն նշանակենք MS, ապա նրա ծավալը կարելի էլինի արտահայտել $MS=S-X$ բանաձևով, որի մեջ S-ը ամբողջական ոլորտն է, իսկ X-ը մասնակի սահմանափակումը։ քանի որ տարբեր հնչույթներ տարբեր կարգի մասնակի սահմանափակումներ կարող են ունենալ, ապա պարզ է, որ X-ը, ընդհանրապես, անհայտ փոփոխական մեծություն է ներկայացնում։ Մեր բե-

¹ Փակագծերում տալիս ենք մեր կողմից կազմված հունական համարժեք տերմինները։

² Ստիպված ենք մեգոսֆերա բառի դիմաց հայերեն գերոլորտ բառը կերտել։ մեծոլորտ բառը թողնելով մակրոսֆերայի համար։

րած օրինակի (ո) համար տվյալ բանաձևը կստանա արտահայտությունը. գրաբարյան ո հնչույթը ներկայացնում է $MS=S$ —բառավերջ:

3. Կիստոլորտ (հեմիսֆերա). ամբողջական ոլորտի մի մասն ընդգրկում է տվյալ հնչույթը, իսկ մյուս մասը՝ նրան մոտավոր մի այլ հնչույթ. օրինակ, գրաբարյան ու հնչույթը բաղաձայնների միջև (տուն, զուրկ և այլն), բառակզրում՝ բաղաձայնից առաջ (ուտել, ուստի և այլն) և բառավերջում բաղաձայնից հետո (առու, դու) ձայնավոր է, իսկ բառամիջում ձայնավորից առաջ՝ ձայնորդ—երկրարբառի բաղադրիչ (նուստ, զենուի, առուի=աուի և այլն). այն բոլոր դիրքերում, որոնց մեջ կարող է լինել ու ձայնավորը, չի կարող լինել ու ($-w$) ձայնորդը: Նշանակում է, ու ձայնավորը և ու ձայնորդը կիսում են ամբողջական ոլորտը, և մեկն ընդգրկում է ծավալի մի մասը, մյուսը՝ մնացած մասը: Եթե կիսոլորտը պայմանականորեն նշանակենք HS , ապա նա կարտահայտվի հետևյալ բանաձևով. $HS=S-HS_1$ կամ $S-HS_2\dots$ որտեղ HS ներկայացնում է մեկ հնչույթային միավորի ծավալը, իսկ HS_1 , $HS_2\dots$ մյուս միավորներին: HS_1 փոփոխական մեծություն է, որովհետև ոլորտը կարող են բաժանել ոչ թե անպայման երկու, այլ ավելի հնչույթային միավորներ: Մեր բերած օրինակի համար այդ բանաձևը կստանա հետևյալ արտահայտությունը. ու ձայնավորի համար $HS=S-HSw$, իսկ w -ի համար՝ $HS=S-HSn$:

4. Մեծոլորտ (մակրոսֆերա). ամբողջական ոլորտի ծավալի մեծագույն մասն ընդգրկում է տվյալ հնչույթը, իսկ սահմանափակ պայմաններում (որոշ դիրքում կամ որոշ կապակցության մեջ) հանդես է գալիս նրա տարբերակը: Հնչույթը, հետևաբար, իր ընդգրկումով ներկայացնում է մեծոլորտը: Այսպես, օրինակ, ռուսերենում և հնչույթն ընդգրկում է ոլորտի մեծագույն մասը (նա կարող է լինել և՛ բառակզրում, և՛ բառամիջում, և՛ փափուկ, և՛ կոշտ բաղաձայններից հետո), մինչդեռ Ե-ն կարող է լինել միայն փափուկ—կոշտ հակադրությունն ունեցող զույգերի կոշտ բաղաձայններից հետո (հմմտ. $МНЛ$ — $МБЛ$, բայց $К$ -ից հետո միշտ և ոչ երբեք՝ $Б$): Իբրև ոլորտի ծավալի մեծագույն մասն ընդգրկող միավոր ռուսերեն Ե-ն հնչույթ է:

5. Մանրոլորտ (միկրոսֆերա). ամբողջական ոլորտի ծավալի մեծագույն մասը՝ մեծոլորտն ընդգրկում է որևէ հնչույթ, իսկ որոշ մասում (որոշ դիրքում կամ կապակցության մեջ), որ կոչում ենք մանրոլորտ, հանդես է գալիս նրա տարբերակը: Այսպես, նախորդ օրինակի մեջ ռուսերեն Ե-ն ընդգրկում է մեծոլորտը, իսկ Ե-ն՝ մանրոլորտը. նշանակում է և հնչույթ է, իսկ Ե-ն՝ նրա տարբերակը: Քանի որ տարբերակները կարող են պայմանավորված լինել կամ որոշ դիրքով, կամ որոշ հնչյունների կապակցությամբ, ապա համապատասխանորեն կունենանք դիրքային տարբերակներ (позиционные вариации) և փոխազդեցական տարբերակներ (комбинаторные вариации):

Եթե մեծոլորտը նշանակենք $S>$, իսկ մանրոլորտը՝ $S<$, ապա կստանանք հետևյալ բանաձևերը. $S>=S-S<$; $S<=S-S>$:

Մանրոլորտն ընդգրկող տարբերակը որոշ դեպքերում կարող է նաև պարտադիր կերպով միշտ նույնը չլինել. հնարավոր է, որ որոշ դեպքերում նա ազատորեն փոխարինվի մեծոլորտն ընդգրկող հնչույթով, և մենք կունենանք այսպես կոչված ազատ տարբերակը: Այսպես, օրինակ, ռուսերենի ր հնչույթը բառակզրում արտասանվում է մոտավորապես մեր ո-ի նման, բայց դա պարտադիր չէ. նա կարող է արտասանվել նաև որպես ո: Այս դեպքում նրա ո-ի

նման արտասանվելը պարտադիր կանոն չէ և այդ պատճառով էլ այդ դիրքում ուն ազատ տարրերակ է (свободная вариация):

Այսպիսով՝ ոլորտային ծավալի ընդդրվման և հնչույթաբանական միավորների հարաբերությունները կներկայացնեն հետևյալ պատկերը.

1. Ոլորտ — հնչույթ

2. Գերոլորտ—հնչույթ

3. Կիսոլորտ—մեկ հնչույթ, որ ներկայացվում է ենթահնչույթներով

4. Մեծոլորտ—հնչույթ

5. Մանրոլորտ—տարրերակ (դիրքային, փոխադրական, ազոտ):

Ոլորտի՝ իրենց ընդգրկման ծավալի մեջ հանդես գալով հանդերձ, հնչույթները որոշ դեպքերում, որոշ պայմանների մեջ կարող են իմաստազատիչ դեր կատարել, իսկ որոշ պայմաններում՝ ոչ: Այսպես, օրինակ, ուսերենի ձայնեղ և խուլ բաղաձայնները որոշակիորեն հակադրվում են իրար՝ ձայնավորներից առաջ ու ձայնավորների միջև և դրանով իսկ իմաստազատիչ դեր կատարում, մինչդեռ բառավերջում ձայնեղները վերածվում են խուլերի ու նույնանում նրանց հետ (օր. ЛУГ և ЛУК), կամ էլ խուլերն են ձայնեղանում ու նույնանում նրանց հետ (օր. ЛУГ БЫ և ЛУК БЫ. երկուսի մեջ էլ ունենք Г հաջորդող Ծ-ից առաջ), որով լեզվական ձևերը նույնական են դառնում, և այդ պատճառով էլ ձայնեղություն—խուլություն հակադրությունը տվյալ դիրքում իմաստազատիչ դեր չի կատարում: Եթե տվյալ դիրքում հնչույթը հանդես է գալիս իմաստազատիչ դերով, ապա այդ դիրքը ուժեղ կամ հնչույթային դիրք է, իսկ եթե այդ դերը չի կատարում, ապա այդ դիրքը թույլ կամ չեղոք կամ ոչ հնչույթային դիրք է: Տվյալ հնչույթի թույլ դիրքում գտնվելը կարող է զուգակցվել նաև հնչույթի արտասանական տարրերություններով:

Վերջապես, պետք է նկատի ունենալ նաև հնչույթների տարրեր խմբերի ոլորտների առանձնահատկությունները. վերը մենք ասացինք արդեն, որ ձայնավորներն ունեն իրենց գործածության որոշակի սահմանները, իրենց հատուկ ոլորտը. որքան էլ տվյալ ձայնավորն ընդարձակորեն ընդգրկի ոլորտը, այնուամենայնիվ նրա այդ ընդգրկումը չի կարող դուրս գալ ձայնավորներին հատուկ ոլորտի սահմաններից: Համապատասխանորեն բաղաձայններն էլ իրենց հատուկ ոլորտն ունեն և չեն կարող դրա սահմաններից ավելին ընդգրկել: Թե՛ բաղաձայնները, և թե՛ ձայնավորներն, այսպիսով, ունեն իրենց մեկ՝ հաստատուն ոլորտը և այդ ոլորտներից յուրաքանչյուրի մեջ է, որ տվյալ բաղաձայնը կամ ձայնավորը կարող է անսահմանափակորեն գործել կամ որոշ սահմանափակումներ ունենալ. հետևաբար, այն հնչույթները, որոնք կարող են հանդես գալ միայն ձայնավորների կամ միայն բաղաձայնների ոլորտում, կարող ենք կոչել մեկ ոլորտ (մոնոսֆերային) հնչույթներ: Բայց կան հնչույթներ էլ, որոնք կարող են հանդես գալ թե՛ մեկ, և թե՛ մյուս ոլորտում (ինչպես վերը տեսանք, այդպիսին էր գրաբարյան ու-ն), և դրան համապատասխան էլ այդպիսի հնչույթները կկոչենք տարուլորտ (հետերոսֆերային) հնչույթներ: Գրաբարյան ու-ն, հետևաբար, տարուլորտ հնչույթ է, որ տարրեր ոլորտներում հանդես է գալիս իր այս կամ այն ենթահնչույթով:

Այս բնորոշումների վրա հենվելով՝ այժմ անցնենք գրաբարյան չ և դ հնչույթների ուսումնասիրությանը և որոշենք նրանց դիրքը գրաբարի հնչույթային համակարգի մեջ:

Հայտնի է, որ դասական գրաբարում լ-ն և դ-ն արտասանությամբ իրար շատ մոտ ձայնորդներ էին: Մրանից ելնելով էլ մենք պետք է որոշենք, թե նրանք անկախ հնչույթներ էին, թե գտնվում էին ենթահնչույթային հարաբերության մեջ: Այդ բանը որոշելու համար դիմենք այսպես կոչված նվազագույն զույգերի հակադրության եղանակին՝ առնելով հետևյալ բառերը. տալ—տաղ, գոլ—գուլ, բել—բել «դեզ», խուլ—խուղ, հոլով—հողով (հող բառի գործիականը), ցելի (ցելում բայի կտր. ա դեմք)—ցելի, խելաց—խելաց, ոլոֆ (նաև՝ ոլոգ)—ոլոֆ, գոլանալ—գողանալ, ալի(ֆ)—աղի(ֆ), ալեաց—աղեաց, մալել—մաղել: Ինչպես ցույց են տալիս այս զույգերը, դասական հայերենում լ և դ կարող են հանդես գալ միևնույն դիրքում, միևնույն պայմաններում և միմյանց հակադրվելով՝ առաջ բերել ձևի տարբերակում—իմաստի տարբերակում: Այլ կերպ ասած, նրանք կատարում են իմաստազատիչ դեր՝ միևնույն պայմաններում իրար հակադրվելով և, հետևաբար, հանդես են գալիս որպես հնչույթներ: Բայց բավական է այդ բառերը մի փոքր ավելի ուշադիր կերպով քննել, և մենք կտեսնենք, որ նրանք չեն ներկայացնում ամբողջ ոլորտը: Բերված բոլոր զույգերի մեջ լ և դ հնչույթները գտնվում են բառավերջում՝ ձայնավորից հետո, կամ բառամիջում՝ երկու ձայնավորի միջև: Ըստ որում, այդ սահմաններում էլ լ և դ-ի հակադրությունն ըստ իմաստազատիչ դերի՝ կատարյալ չէ: Այդպիսի հակադրություն չունենք ի ձայնավորից հետո, գոնե քնիկ հայկական բառերում. դեռ ավելին, ունենք մի քանի զուգաձևեր, ինչպես՝ ջիլ—ջիղ, շիլ—շիղ (ավելի հաճախ՝ շեղ), առանց իմաստային տարբերության, որոնք ցույց են տալիս, որ ի ձայնավորից հետո լ-ն և դ-ն իմաստազատիչ հակադրություն չեն կազմել. ուրիշ խոսքով, այդ դիրքը նրանց համար հնչույթաբանական տեսակետից չեզոք դիրք է:

Ավելի քան սահմանափակվում է հակադրությունն այլ հանգամանքներում: Այսպես՝ բառասկզբում դ—լ հակադրության ոչ մի օրինակ չունենք: Ընդունված է ասել, որ հին հայերենում դ-ով սկսվող բառ չէր կարող լինել: Բառնառարկելի ճշմարտություն է, եթե նկատի ենք ունենում քնիկ հայերեն բառերը: Հիրավի, հնդեվրոպական ծագումով ոչ մի բառի սկզբում դ չունենք. այն բոլոր դեպքերում, երբ հնդեվրոպական բառասկզբի լ-ն հայերենում պետք է տա դ. ստանում է նախահավելված ձայնավոր, ինչպես՝ հնխ. *lug > հայ. եղուկ, հնխ. *noghlo > հայ. *ղունգն > եղունգն, հնխ. lorg² > հայ. ողորկ և այլն: Սա նշանակում է, թե հայերենը հնագույն շրջանում բառասկզբում դ չի ունեցել: Սակայն դասական գրաբարում ունենք արդեն բառեր, որոնք սկսվում են դ-ով: Առձեռն բառարանում այդպիսի բառերը 41 հատ են (չհաշված ածանցավորներն ու բարդերը): Դրանցից միայն դամղայեալ, ղենջակ, ղեկ, ղողանջ, ղողել (ղողակ, ղողումն և այլն) բառերն են, որոնք գործածված են դասական գրաբարում և որոնց առաջին վկայությունները գտնում ենք Աստվածաշնչում: Դրանցից էլ դամղայեալ իրանական փոխառություն է, ղենջակ՝ հունական (ըստ Հ. Աճառյանի՝ հին լատինական) և ղեկ՝ ասորական, իսկ ղողանջ և ղողել՝ անստույգ ծագումով: Այս բոլորից կարելի է հանգել այն եզրակացության, որ թեև հնագույն շրջանում հայերենում բառի սկզբում դ չի եղել, բայց դասական հայերենի շրջանում այդ օրենքն արդեն խախտված էր, թեև դեռևս ոչ այն չափով, որ լ-ի հետ բառասկզբի դիրքում դ-ն հակադրություն կազմեր իմաստազատիչ դերով: Ընդհակառակն, զուգահեռ նույնիմաստ ձևերի գոյությունը ցույց է տալիս, որ նրանք կարող էին իրար փոխարինել

այդ դիրքում՝ առանց իմաստի տարբերակում առաջ բերելու, Այլ կերպ ասած, այդ դիրքում նրանք ղեռնա հանդես են գալիս շեղոք դերով։

Մյուս սահմանափակումներից կարևոր է այն, որ իրրև ընդհանուր կանոն, յ-ից հետո սովորաբար լինում է լ, իսկ Վ-ից հետո՝ ղ. այսպես, մի կողմից ունենք այլ, զայլ, փայլ, ղայլ և այլն, իսկ մյուս կողմից՝ ալղ (օղ), ցաղ, հիւղ, շիւղ, ընծիւղ, ալղ (ենթ. դերբայի վերջ.) և այլն։ Այս դեպքում էլ նրանք հանդես են գալիս ենթահնչյունային դերում՝ գործածության ոլորտի կիսուղորտային հարարերությամբ։

Հին ձեռագրերում ունենք այդ «այլ», զայլ «զայլ», լոյղ, նշոյղ «նշոյլ» և ուրիշ շատ բառեր, որոնց մեջ լ-ի փոխարեն գրված է ղ։ Եթե ընդունենք, որ դրանք ներկայացնում են ավելի նախնական ձևերը, ապա՝ Վ-ից հետո՝ ղ, իսկ յ-ից հետո՝ լ բաշխումը կվերանա, և կունենանք ձայնորդներից հետո՝ միայն ղ կանոնը։ Անտուան Մեյլեն, ըստ երևույթին, հակված է այդ ենթադրության կողմը. «լ-ով երկրարբառից հետո (կամ է-ից հետո) հին ձեռագրերը հաճախ ունեն ղ այդ պայմաններում (=բառավերջում—է. Ա.), այսպես՝ ձՎՆԻ այդ «այլ», ջՎՅԼ դայդ «զայլ», ըՏՕՄԼ նշոյղ «նշոյլ», բայց, այս եզակի դեպքում, չ ղ-ն չի վերածվել նախնական շփականի, ինչպես սովորաբար լինում է. նախն շրջանի ձեռագրերն ունեն լ և ժամանակակից հայերենն էլ արտասանում է լ և ոչ ղ»¹։ Մենք գտնում ենք, որ դասական հայերենի համար հարազատ են եղել ղ-ով ձևերը. դրա համար որպես ապացույց կարող էր ծառայել լոյղ «լող» բառը, որ չունի լոյլ գրությունը։ Սակայն այս հարցն առայժմ կթողնենք առկախ՝ արձանագրելով, որ ավանդական գրության համաձայն յ-ից հետո սովորաբար լինում է լ, իսկ Վ-ից հետո՝ ղ և ստորև, ուրիշ տվյալների օգնությամբ, կաշխատենք վճռական պատասխան գտնել։

Վերջապես, կարևոր սահմանափակումներից մեկն էլ այն է, որ հնդեվրոպական ծագումով բառերի մեջ՝ բաղաձայնից անմիջապես առաջ կամ հետո լ չունենք. պլլուկ «բողբոջ», մլմլել «շփել», կլլանել, կլլնուկ, սիլլիֆուր, փլլանել, գլլուրել, բլլուր, հլլու, լսել և նման բառերի մեջ լ-ի և նախորդ կամ հաջորդ բաղաձայնի միջև եղել է ձայնավոր, որ շեշտակրորույս լինելով սղվել և դարձել է ը (ինչպես՝ կուլ—կըլանել, փուլ—փըլանել, գիլ—գըլորել, բուլ—բլուր և այլն)։ Այդ դիրքում, այսինքն՝ բաղաձայնից անմիջապես առաջ կամ հետո, ունենք միշտ ղ, ինչպես՝ աղտ, զաղտ, աղծ, մեղծ, մեղկ, ֆաղց, եղն, ստեղն, ողբ, հեղզ, Լտղ, աստղ և այլն։ Այստեղ էլ, ուրեմն, նախապես ունեցել ենք կիսուղորտային դրույթուն և, հետևաբար, ենթահնչույթներ։ Սակայն դասական գրարարի շրջանում այս ևս արդեն խախտված էր, քանի որ ունենք մի կողմից ողն, եղն, ֆաղց և այլն, իսկ մյուս կողմից՝ ուլն, ալփ, ինչպես և բաղմաթիվ քերականական ձևեր (թելք, ցելցես, ցելցէ, փլցես, փլջիք և այլն)։ Դեռ ավելին, որոշ դեպքերում, առանձնապես ձևաբանական հանգամանքների ուղեկցությամբ, բաղաձայնից առաջ նրանք արդեն հանդես են գալիս հնչույթային դերով՝ տարբերակելով լեզվական միավորների իմաստները, ինչպես՝ ասեղըն—ասելըն, ստեղըն—ստելըն, ելըն, թելնելը, ելքը—եղըն, քելփ—քեղփ և այլն։

¹ A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 471

Ամփոփելով այդ բոլորը, կարող ենք ասել, որ դասական գրաբարում և ղ հնչյունները ներկայացնում են երեք կարգի հարաբերություն. հնչյութային, ենթահնչյութային և չեզոք. հնչյութային որոշակի տարբերակումով՝ իմաստազատիչ դերով հանդես են գալիս բառավերջում՝ ա, ե, ո, ու, ը ձայնավորներից հետո և բառամիջում՝ ձայնավորների միջև: Իբրև սաղմնավորված ու զարգացող երևույթ հակադրություններ ունենք արդեն նաև ձայնավորի ու լրագաձայնի միջև, որ դեռևս մեծ մասամբ կապված է ձևաբանական հանգամանքների հետ:

Ենթահնչյութային հարաբերություն ունենք բառասկզբում, ուր իբրև կանոն ունենք միայն չ. բայց քանի որ արդեն ունենք մի քանի լրառեր (և նրանցից կազմված բազմաթիվ բարդ ու ածանցավոր բառեր), որոնք սկսվում են ուով, իսկ մյուս կողմից բառասկզբի վ-ն չի վերածվում լ-ի, ապա այստեղ էլ կիսուղորտային հարաբերությունը փոխարինվել էր արդեն չեզոք դերով:

Չեզոք հարաբերության մեջ են, իբրև կանոն, ի-ից հետո և այդ դիրքում կարող են իրար փոխարինել՝ առաջ բերելով զուգահեռ ձևեր, առանց իմաստային տարբերակման (չիլ—չիդ, շիլ—շիդ և այլն): Բայց այս էլ արդեն խախտման պրոցեսում էր գտնվում, ըստ որում ունենք արդեն շատ բառեր, որոնք զուգաձևեր չեն ներկայացնում և ունեն միայն լ-ով (օր. արագիլ, մագիլ), կամ միայն վ-ով (օր. գառագիդ, տալիդ) ձևեր: Բերրայական-ի վերջավորությունը (խօսիլ, դատիլ) այդ զուգահեռությունը և դրա հետ միասին՝ հնչյութային չեզոքությունը խախտող ամենամեծ գործոնն է, որ, ինչպես հայտնի է, հետդասական շրջանում է երևան գալիս:

Քանի որ ըստ գործառնության հաճախականության ամենից ավելի շատ են ձայնավորների միջև և բառավերջում՝ ձայնավորից հետո կիրառության դեպքերը, մի կողմից, և ենթահնչյութային ու չեզոք հարաբերություններն էլ խախտման պրոցեսում են գտնվում, ապա կարող ենք ընդունել, որ լ և ո դասական հայերենում ինֆեուրոյն հնչյույրներ էին: Միաժամանակ, քանի որ հին և նոր սաղմնավորվող երևույթները դեռևս գործում են կողք-կողքի, ապա պատմական մոտեցումով դասական հայերենի վիճակը կարող ենք դիտել ուրպես անցման էապա: Եվ շնայած դրան, հիմք ընդունելով նրանց հնչյութային հակադրությունները, մենք կարող ենք առանց տատանվելու ասել, որ իրենց արտասանությամբ նրանք արդեն որոշակիորեն տարբերակված էին, ըստ որում այդ տարբերակումը պայմանավորված չէր արդեն կողմնակի խոսքային հանգամանքներով (գիրք, հնչյունական կապակցություններ), այլ կազմում էր յուրաքանչյուրի անկախ հնչյութային էությունը: Ըստ այսմ, հինգերորդ դարի առաջին կեսում արդեն լ և ո-ի ֆիզիոլոգիական-ֆիզիկական հատկանիշներից որևէ մեկը (կամ գուցե մի քանիսը) հանդես էր գալիս որպես հնչյութային տարբերակիչ տարր (դիֆերենցիալ էլեմենտ)՝ կազմելով նրանցից յուրաքանչյուրի նեոունակ, Պերհատուկ տարրը: Հետևաբար, եթե նրանցից յուրաքանչյուրի տարբերակիչ տարրերը որոշեմք, պարզած կլինենք նաև յուրաքանչյուրի արտասանական առանձնահատկություններն ու ֆիզիկական հատկանիշները: Ինչպես գիտենք, երկուսն էլ դասական գրաբարում հանդես են գալիս որպես ձայնորդ-բաղաձայն, ուստի և նրանց տարբերակիչ հատկանիշները կարող ենք ներկայացնել հետևյալ ձևով (+ նշանը ցույց է տալիս, որ հնչյութն ունի դրական տարբերակիչ տարրը, — նշանը՝ նրա հակադրությունը):

	1	2
1. Բաղաձայնություն (հզոր. ձայնավորություն)	+	+
2. Նայություն (հզոր. ոչ նայություն)	+	+
3. Դիեզ տոնայնություն (հզոր. հասարակ տոնայնություն)	—	—
4. Հստակություն (հզոր. աղոտություն)	—	+
5. Թավություն (հզոր. անոտություն)	—	+
6. Անընդհատություն (հզոր. ընդհատականություն)	+	+

Ինչպես պարզ կերպով երևում է այս տախտակից, դասական դարարի 1 և 2 հնչույթները չորս տարրերով ընդհանուր են, և միայն երկուսով՝ տարրեր: Ընդհանուր տարրերն են՝ բաղաձայնություն, նայություն, հասարակ տոնայնություն, անընդհատություն, տարրեր են՝ հստակություն՝ դ-ի համար, աղոտություն՝ լ-ի, թավություն՝ դ-ի համար, անոտություն՝ յ-ի: Այս տարրերից երկուսը՝ բաղաձայնություն և նայություն հայտնի են ինքնին և բացատրության կարող չեն: Ինչ տոնայնություն—հասարակ տոնայնություն, ըստ Յակոբսոնի, պայմանավորված է բաղաձայնների քմայնացումով, որ առաջ է բերում տոնայնության զգալի բարձրացում. քանի որ մեր 1 և 2 հնչույթները բնորոշվում են հասարակ տոնայնությամբ, ապա քմայնացումը նրանց արտաանության մեջ տարբերակիչ հատկանիշ առաջ չի բերել, եթե նույնիսկ որոշ չիրքությամբ քմայնացում եղել է: Հստակություն—աղոտությունը պայմանավորված են բաղաձայնների արտասանության ժամանակ ստեղծվող օժանդակ պատնեշների առկայությամբ կամ բացակայությամբ: Այսպես, օրինակ, շրթնային բաղաձայնները կարող են լինել երկշրթնային և շրթնատամնային. առաջինների արտասանությանը մասնակցում են միայն շրթունքները (կա միայն մեկ պատնեշ), իսկ երկրորդների արտասանությանը՝ շրթունքները և ատամնաշարը (ստեղծվում է նաև օժանդակ պատնեշ): Ըստ այսմ, մեր 1-ն բնորոշվել է աղոտությամբ, իսկ 2-ն հստակությամբ, իսկ այդ նշանակում է, թե 1-ն ունեցել է առաջնալեզվային արտասանություն՝ առանց օժանդակ պատնեշի, իսկ 2-ն՝ ետնալեզվային արտասանություն՝ օժանդակ պատնեշի առկայությամբ (փափուկ քիմքի մասնակցություն): Թավություն (КОМПАКТНОСТЬ)— անոտությունը (ОУФФУЗНОСТЬ) պայմանավորված է արտասանության տեղով. ետին և միջին շարքի բաղաձայնները լսելիության տեսակետից ավելի ուժեղ են, քան առաջնալեզվային և շրթնային բաղաձայնները: Ձայնային սպեկտրի մեջ երկրորդներն ունեն ցրված ֆորմանտային բնույթ, առաջինները՝ համեմատաբար կենտրոնացած: Այս էլ նշանակում է, որ մեր 1-ն արտասանվում էր լեզվի առջևի մասով, իսկ 2-ն՝ ետին մասով: Անընդհատություն—ընդհատականությունը պայմանավորված է բաղաձայնների արտասանության բնույթով. շփականների արտասանության ժամանակ օդի հոսանքը դուրս է գալիս առանց ընդհատման (առանց դադարի), իսկ պայթականների ժամանակ՝ ընդհատումով: Նայ հնչույթներից այդ հատկանիշով հակադրվում են իրար 1—ը, իրենց տարբերակներով, առաջինը՝ անընդհատական, երկրորդը՝ ընդհատական. մեր 1 և 2

¹ См. С. К. Шаумян. История системы дифференциальных элементов в польском языке, М., 1958, էջ 8—13.

հնչույթներն, ուրեմն, հավասարապես բնորոշվում են անընդհատությամբ (երկուսն էլ կողքային են)։

Այսպիսով, դասական գրաբարում չ և ղ ինքնուրույն հնչույթներ էին և որոշակիորեն հակադրվում էին իրար և՛ հնչույթային տարբերակիչ հատկանիշներով, և՛ իմաստազատիչ գերով։

Այժմ, ելնելով դրանից՝ փորձենք գեթ մոտավորապես լուսարանել այդ երկու հնչույթների նախապատմությունը։ Այս բանի համար մենք դարձյալ պատմական որոշ էտապներ պետք է նկատի առնենք. առաջին՝ ելակետային էտապը, ինչպես հայտնի է, հնդեվրոպական նախալեզվի վիճակն է։ Որպես երկրորդ էտապ մենք կրնդունենք հնդեվրոպական վիճակից հայերենին անցնելու պատմական երկարատև շրջանը, որ ընդգրկում է մոտ երկու և կես հազարամյակ, և որ առայժմ հնարավոր չէ ավելի փոքր էտապների բաժանել, անհրաժեշտ լեզվական տվյալների բացակայությամբ պատճառով։ Այս էտապը կոչենք նախահայերենի էտապ։ Երրորդ էտապը կհամարենք նախահայերենից հին հայերենին անցման և հնագույն հայերենի (մինչդասական կամ մինչգրաբարյան) շրջանը, այլ կերպ ասած՝ հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի ավարտման շրջանից մինչև մեր թվ. չորրորդ դարի վերջը։

Առաջին էտապում, այսինքն՝ հնդեվրոպական նախալեզվում լ-ն ձայնորդ էր. որ հանդես էր գալիս որպես վանկարար ձայնավոր (օր. $v^o l k^-$), որպես ձայնավոր-երկրարբառի բաղադրիչ (օր. $sa l d$) և որպես բաղաձայն։ Նախահայերենի շրջանում տեղի է ունենում պատմականորեն առաջին կարևոր փոփոխությունը. հն/ս. լ-ն զրկվում է առաջին դերից և դադարում է վանկարար լինելուց. հետևաբար, հն/ս. լ-ի երեք ենթահնչույթներից մեկը վերանում է։ Հակադրությունը պահպանվում է լ ձայնորդ-երկրարբառի բաղադրիչ և ձայնորդ-բաղաձայն ենթահնչույթների միջև. քանի որ նրանք ենթահնչույթներն են մեկ հնչույթի, ապա գտնվում են կիսոլորտային հարաբերության մեջ։ Այդ բանը շատ որոշակի կերպով երևում է հնդեվրոպական ծագումով հայերեն բառերի մեջ։ Այսպես՝ ելնելով հայերենի մյուս ձայնորդների, հատկապես լ (ω) և յ (y) ձայնորդների ոլորտային առանձնահատկություններից, թնչպես և ցեղակից լեզուների տվյալներից, կարող ենք տեսականորեն որոշել լ բաղաձայն ձայնորդի և լ բաղաձայն-երկրարբառի բաղադրիչի ոլորտները հետևյալ ձևով. լ բաղաձայնը լինում էր բառասկզբում՝ բաղաձայնից առաջ, բառամիջում՝ երկու ձայնավորի միջև, բառավերջում՝ ձայնավորից հետո. այս լ-ն նշանակենք պարզապես լ։ լ ձայնորդ-երկրարբառի բաղադրիչը լինում էր բառասկզբում՝ ձայնավորից առաջ, բառամիջում՝ ձայնավորի ու բաղաձայնի միջև կամ բաղաձայնի ու ձայնավորի միջև. այս լ-ն նշանակենք լ'։ Դրանց հաջորդող կամ նախորդող ձայնավորը և բաղաձայնը որպես փոփոխական մեծություններ, նշանակելով համապատասխանորեն x և y տառերով, կունենայինք հետևյալ հնարավոր կապակցությունները. բառասկզբում՝ lx , ly , բառամիջում xlx , xly , ylx , բառավերջում՝ xl , պակասում են՝ բառասկզբի համար ly և բառավերջի համար՝ xl կապակցություններ, այսինքն՝ լ+բաղաձայն և ձայնավոր+լ ձայնորդ ($\equiv$ երկրարբառ)։ Դրանց կանդաղառնանք ստորև։ Այժմ այդ բանաձևերով ներկայացնենք հնդեվրոպական լ հնչույթի երեք ենթահնչույթների փոփոխությունները հայերենում։ Հն/ս. ձայնավորը, զրկվելով վանկարար դերից, պետք է ստանար նախահունչ ձայ-

նավոր, իսկ ինքը վերածվելը երկրարրառի բաղադրիչի. օրինակ՝ հն/ս. sa|d, s|l պետք է տար նախահայերեն a| (կամ o| կամ e|), ունենք աղ, p|l պետք է տար h|l (կամ he| կամ ho|), ունենք հաղ, հն/ս. ak|lո պետք տար asa|n (կամ ase|n կամ aso|n), ունենք ասեղն և այլն: Հնդեվրոպական | ձայնորդ-երկրարրառի բաղադրիչը պետք է մնար |, օրինակ՝ հն/ս. g|l ca| (կամ co| կամ ce|), ունենք ծաղլ, ծիծաղ, *sɛ|d պետք է տար ɔ|l, ունենք աղտ, հն/ս. sed|ɔ պետք է տար e|o, ունենք ետղ, հն/ս. alɛ² պետք է տար ɔ|k, ունենք աղկաղկ և այլն: Բառակազմում |-ով երկրարրառներ կառանալինք |a, |o, |e կապակցություններից, բոտ ալամ՝ հն/ս. |ug պետք է տար |uk, ունենք եղուկ, *noghlo> longho պետք է տար |ung, ունենք եղունգն և այլն: Հնդեվրոպական | ձայնորդ բաղադայնը անխտիր պետք է տար |. այսպես՝ հն/ս. lazda պետք է տար last, ունենք լաստ, louks պետք է տար lovs, ունենք լոյս, հն/ս. dhal պետք է տար dal, ունենք դալ-առ (մինչդեռ dhə|l ձևից ունենք դեղ, դաղձ, դեղ-ին), հն/ս. p|lɔs պետք է տար palios, իսկ սա էլ՝ ali ունենք ալի(f), հն/ս. dhul պետք է տար dul, ունենք ան-դուլ, wol պետք է տար gol, ունենք զոլ և այլն: Այժմ, առաջնորդվելով մեզ ավանդված ձևերով, փորձենք որոշել | և դ-ի հարաբերությունը. բերած օրինակներում ունենք, բաղա-ձայնական դիրքում՝ լաստ, լոյս, դալառ, ալի, դուլ, զոլ, իսկ ձայնորդ – երկ-րարրառի բաղադրիչի դիրքում ունենք՝ աղ, հաղ, հն/ս. ասեղն, ծաղլ, ծիծաղ, աղտ, ետղ, աղկաղկ և այլն: Այլ կերպ ասած, իբրև կանոն՝ հն/ս. | ձայնորդ բաղադայնը ներկայացված է |-ով, իսկ | և | (ձայնավոր և երկրարրառի բաղադրիչը)՝ դ-ով: Հայերենի համեմատական քերականությունը, ընդհանուր առմամբ, հաստատում է այդ՝ հետևյալ ձևով.¹ Հնդեվրոպական |-ն հայերենում դառնում է դ, °| -ն դառնում է ալ, վերածվելով ձայնավոր + բաղադայն կապակցության, կամ դառնում է աղ, եղ և այլն, վերածվելով ձայնավոր + ձայնորդ-երկրարրառի բաղադրիչ կապակցության. նույն | և | անխտիր դառնում են դ բաղադայնի և ձայնավորի կամ ձայնավորի ու բաղադայնի միջև (հմմտ. ասեղն, ասղան, ետղ և այլն): Հնդեվրոպական | -ն դառնում է | թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում և թե՛ բառավերջում, բայց ձայնավորի ու բաղադայնի կամ բաղադայնի ու ձայնավորի միջև ընկնելով դառնում է դ, ինչպես՝ լիզեմ (=լատ. lingo), գելում (=լատ. voluo), զոլ, բայց նույն արմատից՝ զաղճ, լի և յղի, եղն և այլն: Սրանից ինքնին արդեն բխում է հետևյալ եզրակացությունը. նախահայերենում եղել է | ձայնորդ հնչույթը՝ երկու ենթահնչույթով, ձայնավոր (ոչ վանկարար, այլ երկրարրառի բաղադրիչ) և բաղադայն. առաջինը մեզ ավանդված դասական հայերենում ներկայացված է դ տառով. իսկ երկրորդը՝ |: Եթե այս բնորոշումից ելնելով դիտենք վերը բերված տարրերակիչ տարրերի տախտակը, ապա կտեսնենք, որ իրոք դ-ն իր տարրերով ավելի մոտենում է ձայնավոր-ձայնորդին, քան |-ն: Սակայն մեզ ավանդված լեզվական վիճակը անաղարտորեն չի արտացոլում այդ, մի շարք պատճառներով: Ամենից առաջ, երկար դարերի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները խախտեցին ենթահնչույթային հարաբերությունը: Սրա հետևանքով փոխվեց նախահայերենում | և դ-ի դիրքային բաշխումը: Նախահայերենում նրանց

¹ A. Meillet, Op. cit. էջ 42-48:

² Պետք է ենթադրել, որ նախահայերենում նույնպիսի հարաբերություն է եղել նաև | և n հնչույթների միջև (առաջինը՝ ձայնավոր, երկրորդը՝ բաղադայն):

դիրքային բաշխումը նաև դերի բաշխում էր, երկրարրառի բաղադրիչ (ձայնավոր) ձայնորդի ու բաղաձայն ձայնորդի տարբերակում։ Այդ հարարերությունն առաջին հերթին խախտվեց բառասկզբին և բառավերջում։ Մեզ ավանդված դասական գրարարի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հին հայերենում բառը չէր կարող սկսվել բարձրացող (ուժգնացող) երկրարրառով (նա, ուա, ուե, ուի և այլն)։ միակ օրինակը, որ բացառություն կարելի է համարել, նախն բառն է, որի հնագույն ձևն է, սակայն, նրն։ Սա նշանակում է, թե նախահայերենի բառասկզբի բարձրացող երկրարրառների ոչ վանկարար բաղադրիչը ժամանակի ընթացքում վեր է ածվում բաղաձայնի (օր. հնխ. k'swek's նախահայերեն *wece, հին հայերեն wece վեց)։ այդ պրոցեսը բնականաբար տարածվում է նաև լ-ով սկսվող բառերի վրա, ըստ որում, վերածվելով բաղաձայնի, լ-ն ստանում է նախահավելված ձայնավոր, ճիշտ այնպես, ինչպես որ նախալեզվի լ-ն էլ բաղաձայնի վերածվելով ստանում էր նախորդող ձայնավոր նախահայերենում (հմմտ. *դունգն>եղունգն և *ըլ>հաղ, հեղ)։ Սրան զուգակցում էր բառավերջում կատարվող փոփոխությունը։ Պատմահամեմատական քերականությունից հայտնի է, որ հին հայերենում նախնական շրջանում բառը չէր կարող վերջանալ ձայնավորով¹։ Իսկ դա նշանակում է, թե բառավերջի իջնող (թուլացող) երկրարրառների (aw, ai, eu, el, al և այլն) ոչ վանկարար ձայնորդը վերածվում էր բաղաձայնի, որի հետևանքով ինչպես որ աւ, եւ, ալ, ոլ երկրարրառների ւ, յ ձայնորդները բառավերջում դառնում են բաղաձայն, այնպես էլ օլ, օլ և այլ երկրարրառների լ-ն վերածվում է լ-ի։ Այսպիսով, լեզվի զարգացման ընդհանուր բնույթ կրող պրոցեսի հետևանքով բառավերջում և բառասկզբում լ և ղ հնչյունների ֆունկցիոնալ տարբերությունը վերանում է։ վերանում է նաև նրանց ձայնավոր-բաղաձայն հակադրությունը, և երկուսն էլ դառնում են բաղաձայն՝ արտասանական որոշ տարբերությամբ։ Յունկցիոնալ տարբերությունը մթազնվում է նաև բառամիջում՝ հատկապես համաբանության և առնմանության ու տարնմանության հետևանքով։ Այսպես, օրինակ, աղ նախահայերենում երկրարրառ էր. սեռական հոլովում դ-ն երկու ձայնավորի մեջ ընկնելով՝ պետք է դառնար լ, ինչպես ունենք անալի բառի մեջ. բայց ժամանակի ընթացքում ուղղականի նմանությամբ թեք հոլովներում էլ լ-ն փոխարինվել է դ-ով, բնականաբար այն ժամանակ, երբ դ-ն արդեն միայն բաղաձայնական արտասանություն ուներ. նախահայերենում ունեցել ենք kalin (լ բաղաձայն՝ երկու ձայնավորի միջև), իսկ սեռականում՝ ka|noy (կաղնոյ), ինչպես և՝ ka|ni (կաղնի) ածանցավոր ձևը, որոնց մեջ ունենք ձլ երկրարրառը։ Բաղաձայնի վերածվելուց հետո սեռականի և մյուս ձևերի դ-ն իրեն է նմանեցրել նաև ուղղականի լ-ն, և ստացվել է կաղին ձևը։

Այսպիսով, նախահայկերենից հին հայերենին անցման շրջանը դառնում է լ ձայնորդի երկու ենթահնչույթների նույնացման շրջան։ Բայց քանի որ նրանք ունեին արտասանական տարբերություններ, ապա առաջ են գալիս նրանց գործածության նոր կանոններ, որոնք բնորոշում են դ և լ-ի հարարերությունը հին հայերենի հնագույն շրջանում։ Այդ կանոնների մասին միայն մոտավոր պատկերացում կարելի է կազմել դարձյալ հնդեվրոպական ծագումով հայերեն բառերի և հնագույն (մինչև մեր թվ. III—IV դդ.) փոխառությունների ուսումնասիրությամբ։ Այսպես, օրինակ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

¹ S. Meillet, Op. cit., էջ 55—56։

արմատական բառերի մեջ երկու ձայնավորի միջև սովորաբար ունենք ղ (ինչ-պես՝ ոլորկ, ոլուլ-կ, ողորմ, ուղի և այլն), այդ դիրքում լ ունենք սովորաբար ածանցավոր բառերում (ինչպես՝ ղալ-ար, պալ-ար, կլ-ուզակ, սխալ-ակել և այլն)։ ձայնավորի ու բաղաձայնի և բաղաձայնի ու ձայնավորի միջև՝ նույն-պես ղ (ողր, աղա, ետղ, աստղ, ղալ-ար, բայց՝ ղեղծ, տիլ, բայց՝ տիղմ և այլն)։ Բառասկզբում ունենք միայն լ, իսկ բառավերջում ձայնավորից հետո՝ և՛ մեկը, և՛ մյուսը։ Իրանական փոխառությունների մեջ բառասկզբում ունենք լ, բառամիջում և վերջում՝ միայն ղ (հմմտ. լախտ, լատան, բայց, փիղ, փող, փիղ, տափղ, փաղանգամուշկ, սաղաւարտ, սաղար, պղինձ, մողէս, շաղգամ և այլն)։ Այդ կանոնին հակասում են ախտաւմոլ, ապալեպ, բահլիկ, դահլիճ, դոլլ, խորբալ, նարգիլակ, սանդալ, սպասալար (ընդամենը 9) բառերը։ զրանցից բահլիկ, դահլիճ, դոլլ բառերի մասին կխոսենք առանձին։ ախտաւմոլ սխալագրությամբ առաջացած ձև է, և Հ. Աճառյանն ուղղում է ախտաւմար. ապալեպ կազմված է ապ, ապա նախածանցով, ուստի և արմատը՝ լեպ համապատասխանում է կանոնին։ խորբալ, նարգիլակ, սպասալար ուշ շրջանում կատարված փոխառություններ են և այստեղ գործ չունեն։ մնում է միայն սանդալ բառը, որ ավանդված է հինգերորդ դարից, բայց հենց այն հանգամանքը, որ մի քանի տասնյակ բառերից միայն այդ մեկը լ ունի վերջում, ցույց է տալիս, որ դա էլ չորրորդ դարից ոչ շուտ կատարված փոխառություն է։ Այդ կանոնը հաստատվում է նաև կովկասյան լեզուներից կատարված հին փոխառություններով։ Ուշագրավ է, որ և-ից հետո ղ ունենք թե՛ բնիկ հայերեն, թե՛ ամենահնագույն փոխառություններում (ինչ. միջերկրական փոխառութ. Իւղ), և թե՛ իրանական ու կովկասյան փոխառություններում։

Նկատելի է նաև, որ հ-ից հետո ունենք լ. ինչպես՝ հլու, դահլիճ, բահլիկ, իսկ և-ից հետո՝ ղ, ինչպես՝ յղի (արմատը՝ լի), յղել և այլն։ Այս օրինակները նկատի ունենալով, կարող ենք կրկին անդրադառնալ այն հարցին, թե յ բաղադրի՞ն ունեցող երկրաբառերից հետո լ թե՞ ղ պետք է լիներ։ Նախահայերենի համար հարցը լուծվում է համեմատաբար հեշտությամբ։ Լ-ն թուլացող (իջ-նող) երկրաբառից հետո այլ բան չէր կարող լինել, եթե ոչ բաղաձայն, որովհետև անկարելի է պատկերացնել եռաբարբառ, որի վանկարար ձայնավորին հաջորդում է երկու ձայնորդ-երկրաբառի բաղադրիչ. եռաբարբառների մեջ վանկարար ձայնավորը գտնվում է երկու ոչ վանկարարների միջև (օր. եաւ)։ Ուրեմն, նախահայերենում ունեցել ենք *gayl, *phayl և այլն։ Հին հայերենի նախնական շրջանում, երբ Լ-ն ամենուրեք բաղաձայն էր, ապա բնականաբար այդտեղ էլ մնում էր բաղաձայն, բայց միջնալեզվային յ-ի ազդեցությամբ արտասանվում էր որպես ղ. նշանակում է, հին հայերենում ունեցել ենք այդ, զայդ, փայդ, սայդ, նշոյդ, դոյդ և այլն ձևերը, և մեր հին ձևագրերում պահպանված այդ կարգի գրչությունները նազույն վիճակն են ներկայացնում։ Այդ բառերի այլ, զայլ, փայլ և այլն գրչությունը հետևանք է այն բանի, որ հին հայերենի ղ-ն միայն այդ դիրքում է պահել իր լ նշումը, և արտասանությանը հետևելով էլ փոխել են գրությունը։ Ճիշտ այնպես, ինչպես հին աւ-ը դարձրել են օ, դարձյալ հետևելով արտասանությանը։ Այս տեսակետից, յ ձայնորդը կատարել է երկակի դեր լ ձայնորդի զարգացման մեջ. այն ժամանակ, երբ ղ և լ սոսկ արտասանական, դիրքային տարբերակներն էին մեկ հնչույթի, նա պայմանավորել է իրեն հաջորդող լ ձայնորդի արտասանության տեղափոխմանն առջևից դեպի ետ, ունենալով իրենից հետո ու տարբերակը, իսկ այն

ժամանակ, երբ Ղ-ն աստիճանաբար ավելի ղեպի ետ էր փոխադրվում, վերածվելով այժմյան ետնալեզվային շփականին, պահպանում էր նրա միջնալեզվային արտասանությունը (իր արտասանության տեղին համապատասխան), որի պատճառով էլ հին հայերենի Ղ-ն միայն մի դիրքում մնաց լ։ Այս բոլորը ամփոփելով, կարող ենք հանգել այն եզրակացության, որ հին հայերենի նախնական շրջանում (մինչև մեր թվ. III—IV դարերը) 1 և Ղ ներկայացնում էին միևնույն լ ձայնորդ բաղաձայնի երկու դիրքային տարբերակները. բառակցում միշտ լ, բառամիջում՝ սովորաբար Ղ և միայն բարդ և ածանցավոր բառերում՝ երկու ձայնավորի միջև երբեմն լ (եթև բառն անկախ ձևում ուներ վերջահանգ լ), հ-ից անմիջապես հետո լ բոլոր դիրքերում, յ-ից և Վ-ից հետո Ղ, բառավերջում՝ բաղաձայնից հետո միշտ Ղ, ձայնավորից հետո՝ Ղ կամ լ ազատ տարբերակների հարաբերությամբ, կամ թերևս որևէ կանոնի համաձայն, որի բացահայտման հնարավորությունը չեն տալիս մեզ ավանդված գրավոր տվյալները։ Պետք է նկատի ունենալ, որ մեր գրավոր աղբյուրները արտացոլում են հինգերորդ դարի վիճակը և այն էլ ոչ միշտ լիակատար ճշտությամբ, իսկ հինգերորդ դարում Ղ և լ-ի այդ հարաբերությունն արդեն խախտվել էր։ Այսպես ուրեմն, հին հայերենի նախնական շրջանում Ղ և լ-ի կիսոլորտային հարաբերությունը փոխարինվում է մեծոլորտի-մանրոլորտի հարաբերությամբ, ըստ որում մեծոլորտը պատկանում էր Ղ-ին։ Բայց այդ հարաբերությունն իր մեջ կրում էր իր բացասումը։ Զարգացման հետագա ընթացքի ամենամեծ գործոնը բառավերջն էր և ապա՝ բառամեջը։ Բառավերջում նախահայերենից արդեն ժառանգվել էին այնպիսի բառեր, ինչպիսիք են տալ և տաղ, խուլ և խուղ, ցել և ցնղ և այլն. նախահայերենում այդ զույգերը որոշակիորեն իրարից տարբերվում էին. առաջիններում ունենք ձայնավորի ու բաղաձայնի կապակցություն, իսկ երկրորդներում՝ երկրարբան։ Հին հայերենի նախնական շրջանում, երբ բառավերջի երկրարբաններն էլ վերածվեցին նույնպես ձայնավորի ու բաղաձայնի կապակցության, այդ բառերի իմաստի տարբերակման գերն անցավ լ և Ղ-ի միջև եղած արտասանական տարբերությանը։ Իսկ դա արդեն դիրքային (համապատասխանաբար արտասանական) տարբերակներին անհրաժեշտաբար օժտում էր իմաստազատիչ գերով։ Այդպիսի գեր ստացան նրանք նաև բառամիջում, որի համար կային մալել—մաղել, ալիբ—աղիբ, ոլոբ—ողոբ, հոլով—հողով և այլ բաղաձայնի հակադրություններ։ Այսպիսով՝ երկու ենթահնչույթների նույնացումը, նրանց վերածումը մեկ բաղաձայն ձայնորդի տարբերակների, սաղմնավորեց նրանց զարգացումը ղեպի առանձին, ինքնուրույն հնչույթներ։ Եվ բոլորովին պատահական չէ, որ դասական հայերենում այդ հնչույթների հակադրությունը անսահմանափակ է բառավերջում՝ ձայնավորից հետո և բառամիջում՝ երկու ձայնավորների միջև, մինչդեռ ուրիշ դիրքերում կամ խիստ սահմանափակ է, կամ բոլորովին չկա։

Այս բոլորը տեսնելուց հետո կարող ենք արդեն հինգերորդ դարից ղեպի նոր ժամանակները գալ։ Վերը մենք ասացինք, որ դասական հայերենը դիտում ենք որպես հարաբերականորեն կայուն վիճակ։ Այդ մոտեցումն անհրաժեշտ էր, իհարկե, սինխրոնիկ ուսումնասիրության համար։ Բայց նույնիսկ այդ մո-

¹ Պետք է նկատի ունենալ, որ այդ շրջանում գեո չէին բնկել բառավերջի բաղաձայնները, և, օրինակ, ղեղ գեռես ուներ ղեղն ձեր (<հնթ. *pelnuim)։ Այնպես որ, շատ բառերի վերջում Ղ բաղաձայնի երևան գալը պայմանավորված է նաև այդ հանգամանքով։

տեղումով կատարված հետազոտությունն էլ բավական է, իմանալու համար, որ դասական հայերենը բոլորովին էլ վերջնականոր չէ լ և ղ հնչույթների զարգացման: Մի կողմից նա իրոք ավարտման վիճակ է ներկայացնում, քանի որ ղ և լ արդեն որոշակիորեն տարբեր հնչույթներ են, բայց մյուս կողմից նա սկզբնավորում է զարգացման մի նոր պրոցես, որ հանգեցնում է ղ-ի պատմական հնչյունափոխության: Այս նշանակում է, թե հինգերորդ դարից հետո լ և ղ-ի պատմությունը ոչ միայն նրանց հնչույթային հարաբերության, այլև ղ-ի հնչյունափոխության պատմությունն է. հնչույթային հարաբերության զարգացումն իր վախճանին էր հասել արդեն հինգերորդ դարում և դրանից հետո այդ հարաբերությունը շխախտվեց: Դեռ ավելին. հետագա դարերում հնչույթային հակադրությունների սահմաններն աստիճանաբար ավելի և ավելի ընդարձակվեցին՝ վերացնելով դասական հայերենում եղած սահմանափակումները, իսկ դրա հետ միասին՝ ենթահնչույթային ու տարբերակային հարաբերությունների հետքերն անգամ: Այդ պրոցեսի սաղմերը գտնում ենք արդեն դասական հայերենում: Ուրիշ կերպ լինել չէր էլ կարող: Քանի դեռ լ և ղ ենթահնչույթային կամ տարբերակային հարաբերության մեջ էին, ասպա նրանց գործածությունը բնականաբար պետք է սահմանափակվեր որոշակի դիրքերով ու կապակցություններով, բոտ որում մեկը մյուսի դիրքում հանդես գալ չէր կարող: Բայց երբ այդ հարաբերությունները փոխարինվում են հնչույթային հակադրությամբ, ասպա դա առաջին հերթին նշանակում է նրանց գործածությունը բացարձակապես նույնական պայմաններում: Իսկ դրանից ինքնին բխում է այն, որ նրանցից յուրաքանչյուրի ոլորտային սահմանափակումը, որ պայմանավորված էր մյուսի ոլորտով, վերանում է: Կարող է, իհարկե, այս կամ այն հնչույթի ոլորտը որոշ պայմաններով սահմանափակվել, բայց դա կլինի ոչ թե ուրիշ հնչույթների հետ ունեցած հարաբերության, այլ լեզվի մեջ գործող զանազան օրինաչափությունների հետևանք: Ահա, այս տեսակետից էլ դասական հայերենն իր մեջ կրում է ղ և լ-ի հետագա զարգացման սաղմերը: Այստեղ էլ առաջին հերթին սահմանափակման վերացումը սկսվում է բառասկզբից և ղ-ն սկսում է ազատորեն հանդես գալ այդ դիրքում հինգերորդ և հետագա դարերի փոխառությունների մեջ: Վերը մենք արդեն տեսանք, որ ղամդայել, ղենջակ, ղեկ, ղօղանջ, ղօղել բառերը հինգերորդ դարում գործածված են միայն նախահունչ ղ-ով. դրանցից առանձնապես կարևոր են ղեկ, ղօղանջ, ղօղել, որոնցից բաղմաթիվ ածանցավոր ու բարդ բառեր ունենք և որոնք շատ մեծ գործածություն ունեն դասական հայերենում: Դրանց ավելանում են շորրորդ-հինգերորդ դարերի փոխառությունների զուգահեռ ձևերը, որոնց մեջ ղ և լ հանդես են գալիս ազատ տարբերակների հարաբերությամբ, գոնե մեզ ավանդված գրավոր տվյալների համաձայն. այսպես՝ դասական հայերենում ունենք լամբաբ (լամպար) և ղամպար, որից՝ ղամբարել (չի ավանդված՝ լամբարել), լակիշ և ղակիշ և այլն: Ազատ տարբերակների այս հարաբերությունը, վերը թվարկած բառերի հետ միասին, վերացնում էր ղ-ի ոլորտի այն սահմանափակումը, որի համաձայն նա չէր կարող լինել բառասկզբում: Հետագա զարգացումն, ուրեմն, տանում է դեպի հակադրության առաջացումն այդ դիրքում, և յոթ-ութերորդ դարերում ունենք արդեն այնպիսի զույգեր, ինչպիսիք են լօղակ լուղացող, ձուկօ—լօղակ լօթաքնված, ծածկված», լար—ղար լղալինի» և այլն:

Սահմանափակման նույնպիսի խախտում ունենք նաև ուրիշ հանգամանքներում: Այսպես, օրինակ, հին շրջանում Վ-ից հետո կարող էր լինել միայն

ո, բայց հինգերորդ դարում ունենք արդեն հիւդէ և հիւլէ դուղահէն ձեւերը, որոնք աղատ տարբերակների հարաբերություն ստեղծելով, տանում են դեպի լ-ի ազատ գործածությունը այդ դիրքում: Հինգերորդ դարում ունենք լ-ի գործածությունն նաև բաղաձայնից առաջ կամ հետո, ինչպես՝ սլլլլուկ, սիւլլուր, կլլոււմ, կալլոււմ, մզլլի, աւլլուր, աւլլուսին և այլն, որոնք թեև բոլորն էլ բարդ կամ ածանցավոր բառեր են (մեծ մասամբ սղված ձայնավորով), բայց սկզբնավորում են լ-ի գործածության կարևոր սահմանափակումներից մեկի վերացումը:

Այսպիսով, ահա, հինգերորդ դարից սկսած աստիճանաբար վերանում են ո և լ-ի գործածության փոխադարձ սահմանափակումները և վեցից-ութերորդ դարերում այդ երկու հնչույթների, որպես իմաստազատիչ միավորների հակադրությունն ունենք գրեթե բոլոր հնարավոր դիրքերում: Բայց այս էլ իր հերթին պայմանավորում է մի նոր երևույթի զարգացումը: Վերը մենք տեսանք, որ ո և լ հնչույթների միմյանցից տարբերակող հատկանիշներն էին թավություն—անոսություն և հստակություն—աղոտությունը: Քանի դեռ ո և լ դիրքային տարբերակներ էին, ապա նրանց արտասանական առանձնահատկությունները պայմանավորված էին խոսքային հանգամանքներով (դիրք, զանազան կապակցություններ): Իսկ դասական հայերենում, նոր նրանք արդեն ինքնուրույն հնչույթներ էին դարձել, այդ առանձնահատկությունները վերածվել էին ներունակ (ներքենые) հատկանիշների, դարձել նրանց տարբերակիչ տարրերը՝ խոսքային հանգամանքներից անկախ: Ավելին, որքան ծավալվում էր ու ընդարձակվում նրանց, որպես հնչույթների, հակադրության ոլորտը, այնքան ավելի խորանում էր նաև տարբերակիչ հատկանիշների հակադրությունը, իսկ սա էլ իր հերթին ավելի և ավելի խորացնում էր նրանց արտասանության միջև եղած տարբերությունը: Ինչպես ասել ենք, ղ-ի թավություն և հստակություն պայմանավորված էին նրա ետին արտասանությամբ: Ժամանակի ընթացքում այդ առանձնահատկությունն ավելի ուժեղանում էր և ղ-ի արտասանությունն աստիճանաբար տեղափոխվում էր բերանի խոռոչի ավելի ետին մասը: Այս պրոցեսն է, ահա, որ ժամանակի ընթացքում հանգեցնում է ղ (լ) ձայնորդի վերածմանը ետնալեզվային ձայնեղ շփական ղ-ի: Թե սկզբնապես որ դիրքում սկսվեց այդ պրոցեսը, դժվար է որոշել: Քանի որ բառամիջում ու բառավերջում ղ-ն ամենից ավելի շատ է պատահում ա, ո, ու ետնալեզվային ձայնավորների հետ, ապա հնարավոր է կարծել, որ այդ ձայնավորները վճռական դեր են կատարել ղ-ի արտասանությունը բերանի ավելի ետին մասում՝ տեղայնացնելու պրոցեսում: Բայց սա միայն հնարավոր ենթադրություն է, որ առայժմ անկարելի է ստուգել պատմական տվյալներով: Ինչ էլ որ լինի, այդ պրոցեսն աննկատելի կերպով զարգանում է, և տասը-տասնմեկերորդ դարերում դասական հայերենի ո (լ) ձայնորդի դիմաց արդեն ունենք ետնալեզվային շփական ո-ն (չ): Այստեղ մենք կանգ չենք առնի այդ պատմական հնչյունափոխության ժամանակը որոշելու վրա: Պրոֆ. Հ. Աճառյանը շատ հիմնավոր տվյալների գիտական հմուտ քննությամբ¹ ապացուցել է, որ դա տեղի է ունեցել IX—XI դարերում և XI դարում արդեն ավարտված երևույթ էր: մենք առաջնորդվում ենք այդ եզրակացությամբ: Այս հնչյունափոխությունը բոլորովին փոխում է

¹ Հ. Աճառյան, Երբ և դարձավ դ. հայկական ՍՍՏ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1918, № 8, էջ 33—40:

1 և ղ-ի հարարերությունը և նրանց տեղը միջին հայերենի, ինչպես և աշխարհարարի հնչույթային համակարգի մեջ: Մինչև այդ փոփոխությունը ղ և 1 հրնչույթները կազմում էին մեկ ղույզ որպես կողքային նայ ձայնորդներ. այդ փոփոխությունից հետո նրանք իրարից բոլորովին անջատվում են, նույն չափով, որչափով անջատված է յուրաքանչյուր ձայնորդ բաղաձայն բոլոր մյուս բաղաձայններից. 1-ն մնում է ձայնորդների շարքում և, կորցնելով իր մերձավորագույն հակադիր միավորը, հակադրության մեջ մնում մերձավոր նայ ձայնորդներին՝ ու և Ե-ին¹, Ղ-ն դուրս է գալիս ձայնորդների շարքից, մտնում շփական բաղաձայնների շարքը և իր տարբերակիչ տարրերով կազմում ետնալեզվային իս շփականի հակադրությունը: Այս ժամանակից ի վեր 1-ն ընդգրկում է ձայնորդ բաղաձայնների ամբողջական ոլորտը՝ որևէ կախման մեջ չլինելով ղ-ի ոլորտից: Նույնպես և ղ-ն այլևս իր ոլորտով որևէ փոխադարձ հարաբերության մեջ չէ 1-ի հետ. նա այժմ արդեն այդպիսի հարաբերության մեջ է լս-ի հետ. երկուսի հակադրությունը կազմում է ձայնեղութուն—խութուն տարբերակիչ տարրը, և յուրաքանչյուրի գործածությունը, նախապես իրարից անկախ, հետզհետե սկսում է սահմանափակվել կամ ընդարձակվել հետագայում մյուսի գործածության հանգամանքներով պայմանավորված: Որովհետև տասնմեկերորդ դարում է, որ արդեն իրրև ավարտված երևույթ է հանդես գալիս 1-ի հնչյունափոխությունը, ապա՝ իս և ղ հնչույթների հարարերության զարգացման համար սկզբնական, ելակետային վիճակը կընդունենք XI—XII դարերը: Այդ շրջանում երկու հնչույթների ոլորտները զեռես պայմանավորված չեն միմյանցով, և հակադրությունները հանդես են գալիս բոլոր պայմաններում, ինչպես՝

միսիլ—մղել	մուխ—մուղ	խար Քանասնակեր, խոտ—դար Քափնի
ծախու—ծաղու	ախ—աղ	
ախտ—աղտ	ցխի—ցեղ	
	փոխ—փող	

Այս վիճակն է ներկայացնում նաև միջին հայերենը. բայց միջին հայերենում սկզբնավորվում է ղ-ի փոփոխությունը պայթականներից առաջ, որ հետզհետե զարգանում ու ծավալվում է: Կարստը բերում է բուղբ և բաղբ «*блужу, свинной хлеб, atriplex hortensis*», որոնք գրված են բուխբ, բախբ-տասներեքերորդ դարի գրավոր հուշարձաններում: Եթե XIII դարում գրականության մեջ արդեն թափանցել է այդ երևույթը, ապա դա նշանակում է, թե լանավոր խոսքի մեջ շատ տարածված իրողություն էր, որ սկսված պետք է լիներ ավելի վաղ, հավանաբար XII դարից: Այդ երևույթը իր ավարտին է հասնում աշխարհարարում, որի մեջ հին ղբ, ղո, ղզ, ղձ, ղզ, ղց, ղն, ղշ, ղծ, ղփ, ղր, ղբ, ղկ, ղս, ոչ կապակցությունները վերածվում են համապատասխանաբար՝ խպ, խո, խկ, խց, խշ, խն, խշ, խծ, խփ, խր, խո, խկ, խս, խշ կապակցությունների, այլ կերպ ասած՝ բոլոր պայթականներից, պայթաշփականներից ու խուկ շփականներից առաջ ղ-ն վերածվում է իս-ի (ինչպես՝ եղրայր >yexpayr, աղտ > axl, քաղց > k'axç, դեղձ > dexç աղ-

¹ Ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջին դարերում 1-ն ուներ

իր արտասանական տարբերակը, որ գրվում էր ո՛ր Տվյալները ցույց են տալիս, որ դ՝ հնչույթային արժեք չուներ, ինչպես և ժամանակակից բարբառներում է, ուստի և սույն հոդվածում քննության առարկա չենք դարձնում:

² J. Karst. Historische Grammatik des kilikisch-armenischen, Strassburg, 1901, էջ 99:

շիկ > axçik. բողկ > boxk. թուղթ > t'uxt և այլն): Այսպիսով, աշխարհարարում ուն հանդես է գալիս. բառասկզբում՝ ձայնավորից առաջ, բառամիջում՝ երկու ձայնավորների միջև, և ձայնավորի ու ձայնեղ շփականի կամ ձայնորդի միջև (օր. կղզի, մեղվաբույծ, տիղմ, մեղր, եղնիկ, նեղիկ, եղյամ): Բառավերջում՝ ձայնավորից հետո (տեղ, տաղ, տող և այլն), ըստ որում արկղ, աստղ, ինչպես և՛ հղել, հղկել, ղղի, շղարշ, սղել և նման բառերում վ-ին նախորդում է գաղտնավանկ ու ձայնավորը: Ա չի կարող լինել պայթականներից, պայթաշփականներից և խուլ շփականներից անմիջապես առաջ կամ հետո: Նշանակում է, աշխարհարարում վ հնչույթի կիրառությունը սահմանափակվում է, վերածվելով գերուլորտի՝ պատմական հնչյունափոխության հետևանքով, որ տեղի է ունեցել XII—XIII դարերից հետո, մինչդեռ խ-ն ընդարձակել է իր ոլորտի շրջանակները, թեև դրա հետ միաժամանակ ստացել է այն սահմանափակումը, ըստ որի չի կարող հանդես գալ ձայնեղ բաղաձայնի հետ: Սրանից հետևում է այն, որ դ և խ սովորաբար համաձայնում են անմիջապես հաջորդող կամ նախորդող բաղաձայնին՝ ըստ ձայնեղության աստիճանի. ուրեմն, խ-ն ևս ընդգրկում է գերուլորտը, այն տարբերությամբ միայն, որ նրա գերուլորտը շատ ավելի է ընդարձակ, քան դ-ինը, որովհետև այս վերջինը չի կարող լինել ոչ միայն խուլ, այլև առհասարակ որևէ պայթականի կամ պայթաշփականի հետ, մինչդեռ խ-ն կարող է լինել բոլոր խուլ բաղաձայնների հետ: Այսպիսով, երկու հնչույթների գործածության պայմանները աշխարհարարի համար կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևերով.

1. MSխ=S—ձայնեղ բաղաձայնների կապակցություն

2. SMդ=S—պայթականների, պայթաշփականների և խուլ շփականների կապակցություն:

Քանի որ բաղաձայնների հետ դ-ի և խ-ի գործածությունն այսպես սահմանափակվում է, ապա հասկանալի է, որ միատեսակ կապակցություններով հակադրություններ (օր. դր-խր, դպ-խպ և այլն) աշխարհարարը չունի, և հետևաբար դ+բաղաձայն և խ+բաղաձայն, ինչպես և՛ բաղաձայն+դ և բաղաձայն +խ կապակցությունները հնչույթաբանական—ֆունկցիոնալ տեսակետից ներկայացնում են թույլ կամ ավելի ճիշտ՝ չեզոք դիրք:

Այս նույն հարաբերության մեջ են դ և խ հնչույթները նաև նոր գրական լեզվում, սակայն նրա մեջ սաղմնավորվում է մի նոր երևույթ, որ առավել ծավալվում է մեր օրերում՝ տանելով դեպի հիշյալ սահմանափակումների վերացումը: Ժամանակակից գրական լեզվում ունենք նոնեղուկ, աստղալից, ասղանի, մաղբել, ստեղծել, հեղծուցիչ, գեղծ, ատաղծ, մեղր, մեղսակից, մատղաշ, մրծղուկ, մեղկ և բազմաթիվ նման բառեր, նույնիսկ՝ աշխղեկ, որոնց մեջ դ-ն արտասանվում է դ և ոչ՝ խ: Սկզբնավորված և հետզհետե տարածվող այս երևույթը բացատրվում է առաջին հերթին, այսպես կոչված, գրական փոխառություններով: Հայտնի է, որ վերը բերված բառերից շատերը գործածական չէին ժողովրդական լեզվում կամ, որ նույնն է՝ մինչգրական աշխարհարարում¹. օրինակ, ատաղծ, աղնատե, անուրջ, ողջակեզ, գեղծ, հեղծուցիչ, մեղկ

¹ Միևնգրական աշխարհարար տերմինը պայմանականորեն գործածում ենք մինչև XIX դարը գրական աշխարհարարի համար: Հայտնի է, որ աշխարհարար տերմինով հասկացվել է և՛ տասնիններորդ դարի նոր գրական ու խոսակցական լեզուն, և նախորդ դարաշրջանների ժողովրդական—խոսակցական լեզուն: Մեզ համար քննարկվող հարցը պահանջում է այդ երկուսի սահմանադատումը:

և բազմաթիվ այդպիսի բառեր ժողովրդական լեզվում չէին գործածվում. բարբառներում էլ նրանք շատ սակավ են հանդիպում կամ բոլորովին չեն հանդիպում: Գրողներն ու գիտնականները վերցրին այդ բառերը մեր հին մատենագրությունից, և դրական ճանապարհով նրանք թափանցեցին ժամանակակից հայերենի մեջ՝ իրենց հետ բերելով նաև իրենց գրային արտասանությունը: Երբ դրավոր խոսքի մեջ ընթերցողը հանդիպում է իրեն ծանոթ ու հասկանալի աղբյուր, ևղբայր, ֆաղցր, բողկ և նման բառերի, նա արդեն իր լեզվական փորձից գիտի, որ դրանք արտասանվում են ախպյուր, յեխպյուր, ֆախցր, բոխկ և այլն, բայց երբ նա հանդիպում է գեղծ, մեղկ, ճեղծուցիչ, դողդոջ, ծաղկել, աղճատել, ողբակեզ, անուշ, զաղջ և նման բառերի, որոնք չի լսել երբևր, իսկ հաճախ չգիտի էլ, թե ինչ են նշանակում, ապա դրանք կարգում է հենց այնպես, ինչպես գրված են: Այսպիսով, դրական փոխառությունները, որոնք դրավոր խոսքից, դրականությունից էին մուտք գործում խոսակցական լեզվի մեջ՝ բերում էին իրենց գրային կամ գրքային արտասանությունը: Ուրեմն սկզբնավորված երևույթի առաջին ազդակը դրական փոխառություններն էին, որին շուտով միացան նաև ուրիշ գործոններ: Վերը բերված բառերից շատերը (ճրնճրդուկ, աստղալից, պիղծ, ստեղծել, ասդնի, մեղր և այլն) գործածվում են ժողովրդական լեզվում և բարբառներում, բայց նրանք յուրաքանչյուր բարբառում ունեն այդ բարբառին հատուկ արտասանությունը, իսկ ընդհանուր խոսակցական լեզվում արտասանվում էին ճրնճրդուկ, աստղալի(ց), քստեխծել, ասըղնի, մեխկ և այլն: Գրական լեզվում նախորդող ը-ի անկումով (ճրնճ-դուկ, աստ-ղալից, աս-ղանի և այլն) դ-ն հայտնվեց անմիջապես բաղաձայնից հետո և որովհետև այդ դիրքում նա արդեն արտասանվում էր բազմաթիվ դրական բառերում (գեղծ, մեղկ և այլն), այդ բառերի մեջ էլ պահպանվեց անփոփոխ և չդարձավ խ: Փոքր դեր չխաղացին նաև նորակազմ բառերը (մեղսակից, շղատառ, աշխղեկ, ճեղկում և այլն), որոնց մեջ պահպանվում էր բաղադրիչների անկախ արտասանությունը: Վերջապես, այս բոլորից բխող, բայց այժմ ամենից ավելի մեծ գործոնն է այսպես կոչված օրինակի վարակիչ հատկությունը, որ արտահայտվում է բոլոր բառերի մեջ զ+բաղաձայն կամ բաղաձայն+դ կապակցությունը գրային ձևին համապատասխան արտասանելու տենդենցով, եթե ընթերցողը, մանավանդ աշակերտը, գիտի, որ գրվում և արտասանվում է աղջամուղջ, աղճատել, գեղծ և այլն, ապա ինչո՞ւ ողբ, դեղծ, պիղծ, մեղք և այլ բառերի մեջ էլ չպիտի արտասանի զր, դծ, դծ, զք և այլն: Այլ կերպ ասած՝ սկսում է տարածվել գրային կամ գրային արտասանությունը, որին նպաստող հանգամանք է նաև միջնակարգ դպրոցում մայրենի լեզվի ուղղախոսությունն ուսուցման ոչ գոհացուցիչ մակարդակը: Հիրավի, բազմաթիվ բառեր, որոնց մեջ ընդամենը մի երկու տասնամյակ առաջ ընդհանուր էր խպ, խց և այլն արտասանությունը, այժմ ընդհանրացել է զր, դծ և այլն արտասանությունը. մի երկու տասնամյակ առաջ ընդհանուր էր ախպալկույտ, ախպախոտ, դեխցան, վոխշույն և այլն արտասանությունը, իսկ այժմ ընդհանրանում է աղբախոտ, դեղծան, դեղծանիկ, աղբալկույտ, վողջույն և այլն արտասանությունը: Շատ բառեր զեռ տատանվում են երկու ձևերի մեջ, ինչպես քուխտ—քուղր, հաղբանակ—հախտանակ, ռխպերգուրյուն— ողբերգուրյուն, մեղք—մեխկ, ֆաղց—ֆախց, ֆաղցր—ֆախցր և այլն. այդ գույգերի մեջ գերակշռությունը առաջինների կողմն է, իսկ դրանից երևում է, որ օրինակ, մեղք, հաղբանակ (ինչպես և՛ հաղբել, հաղբանղամ, հաղբական, անհաղբ և այլն) բառերն ար-

դեն կորցնում են ավանդական արտասանությունը: Բայց դեռ ավելին կա. մասնավոր, խիստ սահմանափակ դեպքերում (առանձին անհատների մոտ) գրային արտասանությամբ ղը ունենք նույնիսկ այնպիսի բառերի մեջ, ինչպիսիք են եղբայր (!), աղջիկ (!), ողբ (!), ղեղձենի (!) և այլն: Իսկ այդ ցույց է տալիս, որ մեր լեզվի զարգացման ներկա էտապում իրար հակադրվում են ավանդական արտասանությունը և նոր, գրային կամ գրքային արտասանությունը. առաջինի համար նպաստավոր գործոններ են ավանդականությունը և ուղղախոսության ավանդական կանոնների դպրոցական ուսուցումը, երկրորդի օգտին են գործում լեզվի, տվյալ դեպքում նրա հնչյունական համակարգի զարգացման ընդհանուր տենդենցը (հմմտ. նույնպիսի պրոցես ներկայացնող բարձ barc, որձ vorc, արջ arc, բայց՝ ներձել, մերձավոր, անուրջ, որջ և այլն) և գրականությունը, որին հաճախ միանում են նաև թատրոնը, կինոն ու ռադիոն: Առավելությունը երկրորդի կողմն է, և հնարավոր է ենթադրել, թե մոտիկ ապագայում գրային (գրքային) արտասանությունը կհաղթանակի, եթե ուղղախոսական կանոնների ուսուցումը և այլ գործոններ չկասեցնեն այդ պրոցեսի հետագա զարգացումը: Համենայն դեպս, մեր լեզվի ներկա էտապը ներկայացնում է անցման վիճակ. բայց եթե նա դիտելու լինենք բացարձակապես սխալ խրոնիկ մոտեցումով, անգամ, չենք կարող չընդունել, որ ղ և խ հնչույթներն ազատվել են վերը նշված սահմանափակումներից և գործում են ամբողջ ուղրտի ընդգրկումով: Այսպես, ուրեմն, ժամանակակից հայերենում ղ և խ շփականները ինքնուրույն հնչույթներ են, կազմում են մերձավորագույն միավորների մեկ զույգ՝ ձայնեղություն-խույթություն տարբերակիչ տարրի հակադրությամբ և գործում են ուղրտի ամբողջ ընդգրկումով՝ իմաստազատիչ դերով հակադրություն ստեղծելով բոլոր պայմաններում (հմմտ. հատկապես՝ աղտ—ախտ, մեղկ—մեխկ):

Ենելով վերը շարադրվածից՝ հայերեն ղ և ղ հնչույթների պատմությունը կարող ենք բաժանել երկու մեծ դարաշրջանների. ա) ղ և ղ ձայնորդների հակադրության դարաշրջան, բ) խ և ղ բաղաձայնների հակադրության դարաշրջան: Առաջին ընդգրկում է հնդեվրոպական նախալեզվի ճյուղավորման շրջանից մինչև մեր թվ. IX—X դարերը, երկրորդը՝ X—XI դարերից մինչև մեր օրերը: Այս երկու դարաշրջաններից յուրաքանչյուրը բաժանվում է հիշյալ հակադրությունների (զույգերի) զարգացման պատմական հաջորդական էտապների: Առաջին դարաշրջանը ներկայացնում է հետևյալ էտապները. 1. հնդեվրոպական նախալեզու (որպես ելակետային վիճակ, և ոչ թե հայերենի զարգացման էտապ), 2. նախահայերենի էտապ, 3. հին (նախագրաբարյան)¹ հայերենի նախնական էտապ, 4. դասական գրաբարի էտապ, 5. հետդասական գրաբարի էտապ (VI—VIII դդ.):

Երկրորդ դարաշրջանի կարելի է բաժանել հետևյալ էտապների. 1. Գրաբարից—միջին հայերենին անցման էտապ (X—XI դդ.), 2. միջին հայերենի էտապ (X—XI դդ. XV—XVI դդ.), 3. միջին հայերենից աշխարհաբարի անցման և մինչգրական աշխարհաբարի էտապ, 4. ժամանակակից հայերենի էտապ:

¹ Նախագրաբարյան հայերեն տերմինը վերցնում ենք պրոֆ. Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմության պերիոդիկացիայի հարցերը» հոդվածից, երևանի համալսարանի «Փիտոկան աշխատություններ» 57-րդ հատ., 1936:

Ամփոփելով մեր կատարած վերլուծություններն ու նրանցից հանած հետևությունները՝ այդ էտապները կարող ենք բնորոշել ուսումնասիրվող հնչույթների հետևյալ հարաբերություններով:

1. Հնդեվրոպական նախալեզու. | հնչույթ |, |, | (ձայնավոր, երկրարժանի բաղադրիչ, բաղաձայն) ենթահնչույթներով:

2. Նախահայերենի էտապ. | հնչույթ | և | (երկրարժանի բաղադրիչ և բաղաձայն) ենթահնչույթներով:

3. Նախագրաբարյան հայերենի էտապ. | հնչույթ | և | (առաջնալեզվային և ետնալեզվային) դիրքային, փոխազդեցական կամ ազատ տարբերակներով:

4. Դասական հայերենի էտապ. | և | հնչույթներ, յուրաքանչյուրն իր գերուլորտով, մասնակի դեպքերում՝ թույլ (չեզոք) հնչույթային դիրքով:

5. Հետդասական գրաբարի էտապ. | և | հնչույթներ, յուրաքանչյուրն իր ոլորտով (սահմանափակումների վերացում):

6. Գրաբարից—միջին հայերենին անցման էտապ. չ հնչույթի առաջացում և դրա հետևանքով՝ |—| հակադրության (զույգի) փոխարինում x— հնչույթների հակադրությամբ (զույգով):

7. Միջին հայերենի էտապ. x և չ հնչույթներ, յուրաքանչյուրն իր ոլորտի ամբողջ ծավալի ընդգրկումով:

8. Միջին հայերենից—աշխարհաբարին անցման և մինչգրական աշխարհաբարի էտապ. x և չ հնչույթներ, երկուսն էլ գերուլորտի ընդգրկումով և զանազան սահմանափակումներով:

9. Ժամանակակից հայերենի էտապ. x և չ հնչույթներ, ոլորտի ամբողջ ծավալի ընդգրկումով և սահմանափակումների վերացումով:

Վերը մենք ասացինք, որ դասական գրաբարի տվյալներն ուսումնասիրում ենք սինխրոնիկ մոտեցումով և, դրան համապատասխան էլ, դասական գրաբարը դիտում ենք որպես հարաբերականորեն կայուն վիճակ: Այժմ, նույն վիճակն առնելով պատմականորեն իրար հաջորդող այդ էտապների շղթայի մեջ և դիտելով պատմական հայեցակետից՝ տեսնում ենք, որ դասական հայերենը ներկայացնում է անցման վիճակ՝ մինչգրաբարյան հայերենի ու հետդասական գրաբարի միջև: Բայց դա բոլորովին էլ տարօրինակ չէ. պատմական հայեցակետից ելնելով՝ մենք կարող ենք ասել, որ վերը թվարկած ինն էտապներից յուրաքանչյուրը անցման օղակն է ներկայացնում նախորդ ու հաջորդ էտապների միջև:

Հայագիտության մեջ միևնույն այժմ արմատացած է եղել այն կարծիքը, որ գրաբարյան | և դ-ի միջև եղել է սոսկ արտասանական առանձնահատկությունների տարբերություն, որոնք լեզվի համակարգի համար էական նշանակություն չունեն: Մեր այս ուսումնասիրության առաջին հետևությունն այն է, որ |—ն և ո—ն դասական և հետդասական գրաբարում ինֆնուրույն հնչույթներ են եղել ու ֆունկցիոնալ առումով հակադրվել են իրար իմաստազատիչ դերով:

Հայագիտության մեջ | և դ-ի պատմությունը հանգեցվել է միայն |>չ պատմական հնչյունափոխության: Մեր այս ուսումնասիրության երկրորդ հետևությունն այն է, որ հայերեն | և դ-ի պատմությունը զարգացման շատ երկարատև ու բարդ պրոցես է ներկայացնում, և |—չ հնչյունափոխությունը այդ պրոցեսի մեկ առանձին օղակն է միայն, և այն էլ ոչ վերջինը, այլ միջակա օղակներից մեկը:

Վերապես, մեր այս հետազոտությունը մի փորձ է լեզվի ուսումնասիրության սինխրոնիկ և դիախրոնիկ հայեցակետերը զուգակցելու՝ օգտագործելով համապատասխանաբար ստրուկտուրալ վերլուծության մեթոդը և պատմահամեմատական մեթոդը: Ինչևիցե մեր ուսումնասիրության արդյունքներից՝ զրտնում ենք, որ այդ երկու մերոդների զուգակցումը ոչ միայն հնարավոր, այլև անհրաժեշտ է. ամեն մի պատմական ուսումնասիրություն այնքան ավելի լիարժեք ու բազմակողմանի կառույ է լինել, որքան ավելի լավ են օգտագործվում նրա մեջ ստրուկտուրալ և պատմահամեմատական մերոդները:

ИЗ ИСТОРИИ ФОНЕМНОЙ СИСТЕМЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Э. Б. АГАЯН

(Р е з ю м е)

Одним из интереснейших явлений в истории фонетической системы армянского языка является развитие фонем *l* (*լ*) и *l* (*ղ*) древнеармянского языка. На основе выяснения их фонемного отношения, функционирования и места в фонематической системе древнеармянского языка автор определяет основные исторические этапы их развития и изменения, начиная с эпохи индоевропейского праязыка. При этом автор выделяет девять исторических этапов:

1. Индоевропейский праязык (как исходное состояние): фонема *l* (сонант) с аллофонами *l*, *ɫ*, *ʔl* (согласный, компонент дифтонга, гласный).

2. Этап праармянской системы: фонема *l*, реализующаяся аллофонами *l* и *ɫ*.

3. Этап дописменной древнеармянской системы: фонема *l*, реализующаяся вариациями *l* (передняя) и *ɫ* (задняя):

4. Этап древнеармянской системы классического периода: фонемы *l* (*լ*) и *ɫ* (*ղ*) с определенными ограничениями функционирования и с нейтрализацией в отдельных позициях.

5. Этап постклассической древнеармянской системы: фонемы *l* и *ɫ* без ограничения функционирования и без нейтрализации.

6. Переходный этап от древнеармянского к среднеармянскому: переход фонемы *ɫ* в *ɣ*, что означает возникновение новой фонемы (гutturального фрикативного звонкого); в результате этого — замена оппозиции *l-ɫ* оппозицией *x-ɣ* (*խ-ղ*).

7. Этап среднеармянской системы: фонемы *x* и *ɣ*, с одной стороны, и *l* (с вариацией *l'*), с другой.

8. Этап перехода от среднеармянского к новоармянскому (ашхарабару) и период долитературного новоармянского языка: фонемы *x* и *ɣ* с нейтрализацией перед согласными, и фонема *l*.

9. Этап современного (литературного) армянского языка: фонемы *x* и *ɣ* с постепенной ликвидацией нейтрализации, и фонема *l*.

В последних четырех этапах фонема *l* является изолированной.